ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՔԱՐՅԱՆ, ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ, ԼԻԼԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

7–ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Մեթոդական ուղեցույց

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2023

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀՏԴ 000
ԳՄԴ 000
Հ 000

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ: 7–րդ դասարան: Մեթոդական ուղեցույց / Հ. Զաքարյան,
Հ 000 Յ. Ավետիսյան, Գ. Մկրտչյան, Լ. Գրիգորյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2023.— 48 էջ:

ՀՏԴ 000
ԳՄԴ 000

ISBN 978–9939–99–000–0

© Հեղինակներ, 2023
© «Զանգակ–97» ՍՊԸ, 2023

Առաջաբան

21-րդ դարում հանրակրթությունը նպատակ ունի ձևավորելու որոշակի կարողունակություններով զինված հայ քաղաքացի, որը պատրաստ է դիմագրավելու ցանկացած փոփոխության, քննական վերլուծության ենթարկելու իրադրությունը, մշակելու քայլեր, առաջարկելու փոփոխություններ, գործելու հանուն հանրության, հանուն իր երկրի բարօրության, պետականության ամրապնդման և բարգավաճման:

Հայոց (մայրենի) լեզվի, գրականության, հայ գրականության դասավանդումը բացառիկ դեր ունի անհատի, պետականամետ հայ քաղաքացու արժեքային համակարգի, նրա բարոյական նկարագրի ձևավորման գործում: Հայոց լեզվի և գրականության դասավանդման ընթացքում մշակվում և ամրապնդվում է այն դիրքորոշումը, որ մայրենի լեզուն՝ որպես ՀՀ պետական լեզու, անկախ պետականության պահպանման, զարգացման կարևորագույն երաշխիքն է, որը անփոխարինելի դեր ունի ինչպես հենց իր՝ սովորողի, այնպես էլ ողջ հայ ժողովրդի կյանքում: Սովորողը հայոց լեզվից, գրականությունից գիտելիք, որոշակի հմտություններ ձեռք բերելով հանդերձ՝ ուսումնասիրում է իր մայրենի լեզուն՝ որպես իր ինքնության բացահայտման և դրսևորման, որպես հաղորդակցման և համագործակցության, որպես այլ ոլորտներից գիտելիք ձեռք բերելու, օտար լեզու սովորելու անփոխարինելի միջոց: Մայրենի լեզվի, գրականության ուսումնասիրությունը ձևավորում է որոշակի վերաբերմունք և դիրքորոշում հայեցի ոգու, ազգային արմատների պահպանման և ամրապնդման համար, ինչպես նաև հնարավորություն է տալիս խորությամբ ընկալելու հայ մարդու արժեքային համակարգը, ժողովրդի կենցաղը, նիստուկացը, հավատալիքները, ավանդույթները, սովորույթները: Ազգային ոգին և մշակույթը արժևորելու, գնահատելու, պահպանելու, հաջորդ սերնդին փոխանցելու պատրաստակամությամբ և գործուն մասնակցությամբ դաստիարակվում է հայրենասեր, պետական մտածողություն ունեցող, օրինապահ, բարեկիրթ, ներդաշնակ զարգացած անձնավորություն, որը պատրաստ է սովորելու ողջ կյանքի ընթացքում:

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1) Լեզուն **մտածողության** միջոց է (Աղայան Էդ., Լեզվաբանության հիմունքներ, էջ 16-17). հայոց (մայրենի) լեզու ուսումնասիրելու ընթացքում զարգանում են սովորողի քննադատաբար մտածելու, երևակայություն դրսևորելու, ստեղծարարության, ինչպես նաև բանավոր և գրավոր խոսքով իր մտածումները, հույզերը ձևակերպելու և վերարտադրելու կարողությունները: Հայոց լեզվի ուսումնասիրության արդյունքում ձևավորվում է ***հայեցի լեզվամտածողություն, որն արտահայտվում է հայերենով բանավոր և գրավոր գրագետ խոսք կառուցելու, գրվածք (տեքստ) ստեղծելու կարողությունների դրսևորմամբ:***

2) Լեզուն **հաղորդակցման** միջոց է (Աղայան Էդ., Լեզվաբանության հիմունքներ, էջ 9). հայոց (մայրենի) լեզվի ուսումնասիրության գործընթացում զարգանում են սովորողի՝ մարդկանց հետ տարբեր միջոցներով և եղանակներով (ժեստերի լեզու, ցուցադրում, ունկնդրում) հաղորդակցվելու, համագործակցելու, ցանկացած միջավայրում իրեն լիարժեքորեն դրսևորելու, բանակցելու, լսարանի

առջև ելույթ ունենալու կարողությունները: Հետևաբար հայոց (մայրենի) լեզվի դասավանդման հաջորդ **հիմնական նպատակը** սովորողների **հաղորդակցական կարողությունների զարգացումն** է:
3) Հայոց (մայրենի) լեզուն ուսումնական բոլոր ոլորտներից **գիտելիք ձեռք բերելու միջոց է**. հայոց լեզվի ուսումնասիրությունը հիմք է ստեղծում **այլ առարկաներից գիտելիք ձեռք բերելու,** վերառարկայական, ներառարկայական և միջառարկայական հետազոտական, նախագծային գործունեություն ծավալելու և դրանց արդյունքները փաստարկված խոսքով նաև ժեստերի լեզվով հաղորդելու համար: Մայրենի լեզվի իմացությունը հնարավորություն է տալիս նաև սովորելու և հաղորդակցվելու **օտար լեզուներով: Հայոց լեզվի ուսումնասիրության նպատակներից են ուսումնական այլ բնագավառներում տարբեր թեմաներով կապակցված խոսք կազմելու կարողության ձևավորումը և զարգացումը:**
4) Հայոց (մայրենի) լեզվի և գրականության (հայ գրականության) ուսումնառության ընթացքում ձևավորվում, զարգանում և կատարելագործվում են **սովորողի անձնային նկարագիրը,** վերաբերմունքը կամ **դիրքորոշումը իր երկրի, պետության, ազգային արժեհամակարգի, սեփական անձի և կյանքի հանդեպ (ՀՊՉ):**

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հայոց լեզվի (մայրենի) և գրականության, հայ գրականության՝ Հանրակրթության պետական չափորոշիչի դրույթների, պահանջների, դպրոցի յուրաքանչյուր աստիճանի կամ ծրագրի համար մշակված վերջնարդյունքների հիման վրա ձևավորվել են **հիմնական հասկացություններ և ենթահասկացություններ**, որոնց համապատասխան՝ սահմանված են չափորոշչային հստակ պահանջներ կամ չափանիշեր: Ամեն հասկացությանը համապատասխան մշակված չափանիշերը նշում են սովորողի գիտելիքի, կարողության ձեռքբերման, վերաբերմունքի և արժեքային համակարգի, այսինքն՝ կարողունակության ձևավորման աստիճանը: Միևնույն ժամանակ դրանց հիման վրա իրականացվում է սովորողի գնահատումը: Ուսուցիչը ձևավորող և միավորային գնահատման սանդղակները կազմում է՝ առաջնորդվելով ինչպես ամեն դասարանի համար սահմանված ընդհան-րական, այնպես էլ ամեն թեմայի համար մշակված վերջնարդյունքներով:

Առաջնորդվելով Հանրակրթության պետական չափորոշիչի պահանջներով և հայոց լեզվի, գրականության բնագավառի նպատակներով՝ 1-12-րդ դասարաններում հայոց լեզվի և գրականության բնագավառի առարկաների ուսուցման և ուսումնառության համար ընտրվել են հետևյալ **հիմնական հասկացությունները՝**

Հաղորդակցում
Ընթերցանություն/գեղարվեստական ստեղծագործություն
Լեզվական համակարգ
Ստեղծարարություն
Ինքնություն

Ամեն հիմնական հասկացություն ունի իր ենթահասկացությունները, որոնք տարբերվում են՝ պայմանավորված առարկայի յուրահատկություններով և ուսումնասիրության պահանջներով, ինչպես նաև սովորողների տարիքային առանձնահատկություններով: Վերջնարդյունքները ներկայացված են աղյուսակով, տարիքային բոլոր խմբերի (բոլոր դասարանների) համար, հստակ են և չափելի:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹ	ԵՆԹԱՀԱՍԿԱ-ՑՈՒԹՅՈՒՆ	ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ

ՅՈՒՆ				
ՀԱՂՈՐԴԱԿ-ՑՈՒՄ	ԲԱՆԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԱԿ-ՑՈՒՄ	7-րդ դասարան	8-րդ դասարան	
	Ելույթ, բանավեճ, հարցազրույց	1. Պատմի լսածի, տեսածի, զգացածի մասին, նկարագրի մարդկանց, երևույթներ, առարկաներ, դեպքեր, իրադարձություններ:	1. Պատմի լսածի, տեսածի, զգացածի մասին, նկարագրի մարդկանց, երևույթներ, դեպքեր, իրադարձություններ:	1. Պատմի լսածի, տեսածի, զգացածի մասին, նկարագրի մարդկանց, երևույթներ, դեպքեր, իրադարձություններ:
		2.Ընթերցի տեքստը պահանջվող հնչերանգով, հարցեր առաջադրի, պատասխանի առաջադրված հարցերին, մեկնաբանի, փոխանցի զգացողություններ, դուրս բերի հիմնական և թաքնված գաղափարը:	2. Ընթերցի տեքստը պահանջվող հնչերանգով, վերարտադրի, հարցեր առաջադրի, պատասխանի առաջադրված հարցերին, մեկնաբանի, փոխանցի զգացողություններ, դուրս բերի հիմնական և թաքնված գաղափարը:	2. Ընթերցի տեքստը պահանջվող հնչերանգով, վերարտադրի, հարցեր առաջադրի, պատասխանի առաջադրված հարցերին, մեկնաբանի, փոխանցի զգացողություններ, դուրս բերի հիմնական և թաքնված գաղափարը:
		3. Գրագետ ելույթ ունենա լսարանի առջև առաջադրված թեմայի շուրջ, կարճ հարցազրույց վարի հետաքրքրող թեմայի շուրջ:	3. Ծանոթ թեմայի շուրջ ելույթ ունենա լսարանի առջև, ազատ, անկաշկանդ, գրագետ, հարցազրույց վարի՝ առաջադրված խնդրին վերաբերող հարցեր պատրաստելով:	3. Ելույթ ունենա լսարանի առջև անծանոթ թեմայի շուրջ անկաշկանդ, գրագետ, արտահայտիչ, բանավեճ և հարցազրույց վարի՝ նախապես խորամուխ լինելով որևէ բնագավառի առանձնահատկությունների մեջ:
		4. Կարծիք հայտնի, պաշտպանի	4. Կարծիք հայտնի, պաշտպանի	4. Կարծիք հայտնի, պաշտպանի

		սեփական տեսակետն ու դիր-քորոշումը՝ հիմնավորելով այն:	սեփական տեսակետն ու դիր-քորոշումը՝ հիմնա-վորելով այն:	սեփական տեսակետն ու դիր-քորոշումը՝ հիմնա-վորելով այն:
	ԳՐԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԱԿ-ՑՈՒՄ **Փոխադրություն Շարադրություն (երկխոսություն, մենախոսու-թյուն)**	1. Գրավոր խոսքի տարբեր տեսակներ կիրառի տարբեր նպատակների և լսարանների համար՝ պահպանելով գրագետ շարադ-րանքի (ուղղագ-րություն և կետադ-րություն, բառա-գործածություն, քերականություն) կանոնները, գրի հակիրճ շարադ-րանք և երկխոսու-թյուն:	1. Գրավոր խոսքի տարբեր տեսակներ կիրառի տարբեր նպատակների և լսարանների համար՝ պահպանելով գրագետ շարադրանքի (ուղ-ղագրություն և կետադրություն, բառագործածու-թյուն, քերականություն) կանոնները, գրի ծավալուն շարադ-րանք և տարբեր տեսակի երկխոսություններ:	1. Գրավոր խոսքի տարբեր տեսակներ կիրառի տարբեր նպատակների և լսարանների համար՝ պահպանելով գրա-գետ շարադրանքի (ուղղագրություն և կետադրություն, բառագործածու-թյուն, քերականություն) կանոնները, գրի ծավալուն շարադ-րանք և մենախո-սություն:
		2.Վերլուծի տրված տեքստը՝ վեր հանելով պատճա-ռահետևանքային կապերը:	2.Վերլուծի տրված տեքստը՝ վեր հանելով պատճա-ռահետևանքային կապերը:	2.Վերլուծի տրված տեքստը՝ վեր հանելով պատճա-ռահետևանքային կապերը:
		3. Գրավոր պա-տասխանի հարցե-րին՝ կատարելով անհրաժեշտ մեկնաբանությունները:	3. Գրավոր պա-տասխանի հարցե-րին՝ կատարելով անհրաժեշտ մեկնաբանությունները:	3. Գրավոր պա-տասխանի հարցե-րին՝ կատարելով անհրաժեշտ մեկնաբանությունները:

		4. Փոխադրի լսածը կամ կարդացածը առանց դեպքերի հաջորդականության խախտման, հարազատ մնալով բնագրին, գրագետ հայերենով հաղորդակցվի նաև ժամանակի և տարածության մեջ /էլեկտրոնային տեքստեր/:	4. Փոխադրի լսածը կամ կարդացածը առանց դեպքերի հաջորդականության խախտման, հարազատ մնալով բնագրին, գրագետ հայերենով հաղորդակցվի նաև ժամանակի և տարածության մեջ /էլեկտրոնային տեքստեր/:	4. Փոխադրի լսածը կամ կարդացածը առանց դեպքերի հաջորդականության խախտման, հարազատ մնալով բնագրին, գրագետ հայերենով հաղորդակցվի նաև ժամանակի և տարածության մեջ /էլեկտրոնային տեքստեր/:
	ՈՉ ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ	1. Մեկնաբանի տարաբնույթ նշանները, համադրի, փոփոխի:	1. Մեկնաբանի տարաբնույթ նշանները, համադրի, փոփոխի:	1. Մեկնաբանի տարաբնույթ նշանները, համադրի, փոփոխի:
		2. Արդյունավետ կիրառի ոչ բառային հաղորդակցման ձևեր, նրանցով բառեր, բառակապակցություններ, նախադասություն-ներ, տեքստ կազմի (ռեբուս, նկարելուկ, պատկերագիր) կամ դրանք ներառի տեքստերում:	2. Արդյունավետ կիրառի ոչ բառային հաղորդակցման ձևեր, նրանցով բառեր, բառակապակցություններ, նախադասություն-ներ, տեքստ կազմի (ռեբուս, նկարելուկ, պատկերագիր) կամ դրանք ներառի տեքստերում:	2. Արդյունավետ կիրառի ոչ բառային հաղորդակցման ձևեր, նրանցով բառեր, բառակապակցություններ, նախադասություն-ներ, տեքստ կազմի (ռեբուս, նկարելուկ, պատկերագիր) կամ դրանք ներառի տեքստերում:
		3. Կազմի, բացատրի, ցուցադրի գրաֆիկներ և աղյուսակներ, տրամագրեր, խորհրդանշաններ:	3.Կազմի, բացատրի, ցուցադրի գրաֆիկներ և աղյուսակներ, տրամագրեր, խորհրդանշաններ:	3.Կազմի, բացատրի, ցուցադրի գրաֆիկներ և աղյուսակներ, տրամագրեր, խորհրդանշաններ:
ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ	1. Կարդա ուղղախոսական կանոններին համապատասխան:	1. Կարդա ուղղախոսական կանոններին համապատասխան:	1. Կարդա ուղղախոսական կանոններին համապատասխան:

	ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄ	2. Գրի ուղղագրական կանոններին համապատաս-խան:	2. Գրի ուղղագրական կանոններին համապատաս-խան:	2. Գրի ուղղագրական կանոններին համապատաս-խան:
		3. Խոսի ուղղախոսական կանոններին համապատաս-խան:	3. Խոսի ուղղախոսական կանոններին համապատաս-խան:	3. Խոսի ուղղախոսական կանոններին համապատաս-խան:
	ԲԱՌԱԳԻՏԱ-ԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄ	1. Ճանաչի և գոր-ծածի մենիմաստ և բազմիմաստ բառեր, տրված բառերը կիրառի ուղիղ և փոխաբե-րական իմաստնե-րով:	1. Ճանաչի և գոր-ծածի մենիմաստ և բազմիմաստ բառեր, տրված բառերը կիրառի ուղիղ և փոխաբե-րական իմաստ-ներով:	1. Ճանաչի և գո-ր ծածի մենիմաստ և բազմիմաստ բառեր, տրված բառերը կիրառի ուղիղ և փոխաբե-րական իմաստ-ներով:
		2. Տարբերակի և կիրառի բառերի ձևաիմաստային տեսակները (հոմանիշ, հակա-նիշ, համանուն, հարանուն) և դարձվածքները:	2. Տարբերակի և կիրառի բառերի ձևաիմաստային տեսակները (հոմանիշ, հականիշ, համանուն, հարանուն) և դարձվածքները:	2.Տարբերակի և կիրառի բառերի ձևաիմաստային տեսակները (հոմանիշ, հականիշ, համանուն, հարանուն) և դարձվածքները:
		3.Օգտվի տարբեր տեսակի բառարաններից ըստ նպատակի (բացատրական, թարգմանական, դարձվածաբանա-կան, հոմանիշային և այլն):	3. Օգտվի տարբեր տեսակի բառարաններից ըստ նպատակի (բացատրական, թարգմանական, դարձվածաբանա-կան, հոմանիշային և այլն):	3.Օգտվի տարբեր տեսակի բառարաններից ըստ նպատակի (բացատրական, թարգմանական, դարձվածաբանա-կան, հոմանիշային և այլն):
	ՔԵՐԱԿԱՆԱ-ԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄ **Ձևաբանություն**	1. Ճանաչի գոյա-կանի, ածականի, թվականի, դերան-վան, բայի քերա-կանական հատկանիշները, տարբերակի և կիրառի խոսքում:	1. Ճանաչի մակ-բայի, կապի, շաղ-կապի վերաբերա-կանի, ձայնարկու-թյան հատկանիշ-ները, տարբերակի և ճիշտ կիրառի խոսքում:	1. Տարբերի բարդ նախադասության տեսակները (համադասական և ստորադասական:

	Շարահյուսություն	2. Ձևափոխի (հոլով, հոլովում, առում, թիվ, խոնարհում) խոսքի մասերը կանոններին համապատասխան և ըստ անհրաժեշտության և ճիշտ ձևափոխություններով կիրառի խոսքում:	2. Կազմի բառակապակցություններ և պարզ նախադասություններ, նախադասության անդամները ճիշտ կապակցի (համաձայնություն, խնդրառություն, շարադասություն):	2. Կազմի համադասական և ստորադասական նախադասություններ, ճիշտ կիրառի խոսքում, ուրիշի խոսքը փոխակերպի անուղղակիի, կազմի երկխոսություն, մենախոսություն:
		3. Իմանա կետադրական որոշ կանոններ և կետադրի տարաբնույթ տեքստեր: Կազմի գրագետ խոսք:	3. Ճանաչի նախադասության գլխավոր և երկրորդական անդամները և ճիշտ կիրառի խոսքում:	3. Բացատրի նախադասությունների կապակցման միջոցները, հիմնավորի ընտրությունը:
		4. Կատարի ձևաբանական վերլուծություն և կազմի գրագետ խոսք:	4. Իմանա նախադասության անդամների կետադրությունը և կիրառի ըստ անհրաժեշտության:	4. Իմանա նախադասությունների կետադրությունը, կետադրի տարաբնույթ տեքստեր:
	ՈՃԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄ	5. Տարբերի խոսքի ոճերը, կիրառի կամ փոփոխի համապատասխան բառապաշար:	5. Տարբերի խոսքի ոճերը, կիրառի կամ փոփոխի համապատասխան բառապաշար:	5. Տարբերի ոճերը: Կազմի խոսք՝ ըստ իրադրության: Տեղադրի կամ փոփոխի հա-մապատասխան բառապաշար:
ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՏԵՔՍՏԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒՄ	1. Նորովի վերարտադրի լսածը, ընթերցածը, դիտածը:	1. Նորովի վերարտադրի լսածը, ընթերցածը, դիտածը:	1. Նորովի վերարտադրի լսածը, ընթերցածը, դիտածը:
		2. Ստեղծի բանավոր և գրավոր պատկեր ռավոր խոսք, արձակ և չափածո պատմություններ, երկխոսություն:	2. Ստեղծի բանավոր և գրավոր պատկերավոր խոսք, արձակ և չափածո պատմություններ, երկխոսություն:	2. Ստեղծի բանավոր և գրավոր պատկերավոր խոսք, արձակ և չափածո պատմություններ, երկխոսություն, մենախոսություն:

		3. Սկսի, շարունակի և ավարտի պատմությունը, զարգացնի այն՝ հարստացնելով նոր պարբերություն-ներով:	3. Սկսի, շարու-ակի և ավարտի պատ-մությունը, զար-գացնի այն՝ հարըս-տացնելով նոր պարբերություն-ներով:	3. Սկսի, շարունա-կի և ավարտի պատմությունը, զարգացնի այն՝ հարստացնելով նոր պարբերու-թյուն-ներով:
		4. Ստեղծի տարա-բնույթ ուսումնա-կան (ցուցադրա-կան նյութեր՝ պաս-տառ, գրքույկ, ուղեցույց, սահիկաշար, անիմացիա, տեսանյութ) և այլն, փաստարկված մեկնաբանություն-ներով ներկայացնի:	4. Ստեղծի տարա-բնույթ ուսումնա-կան (ցուցադրա-կան նյութեր՝ պաս-տառ, գրքույկ, ուղե-ցույց, սահիկաշար, անիմացիա, տեսանյութ) և այլն, փաստարկված մեկնաբանություն-ներով ներկայաց-նի:	4. Ստեղծի տարա-բնույթ ուսումնա-կան (ցուցադրական նյութեր՝ պաստառ, գրքույկ, ուղեցույց, սահիկաշար, անիմացիա, տեսանյութ) և այլն, փաստարկված մեկնաբանություն-ներով ներկայացնի:
	ՆԱԽԱԳԻԾ	1. Ձևակերպի հե-տազոտական հարց դրույթի վերաբերյալ:	1. Ձևակերպի հե-տազոտական հարց դրույթի վերաբերյալ:	1. Ձևակերպի հե-տազոտական հարց դրույթի վերաբերյալ:
		2. Պլանավորի քայլաշար, հավաքի փաստեր:	2. Պլանավորի քայ-լաշար, հավաքի փաստեր:	2. Պլանավորի քայ-լաշար, հավաքի փաստեր:
		3. Տեղեկություն-ներն ամբողջացնի որպես ամփոփում, կատարի եզրահանգումներ:	3. Տեղեկություն-ներն ամբողջացնի որպես ամփոփում, կատարի եզրահանգումներ:	3. Տեղեկություն-ներն ամբողջացնի որպես ամփոփում, կատարի եզրահանգումներ:
		4. Նախագծի բնույ-թից կախված՝ ապահովի միջա-ռարկայական կապերը, փաստարկի օրի-նակներով և ներ-կայացնի՝ ստեղ-ծելով սահիկա-հանդես, ֆիլմ, անիմացիա,	4. Նախագծի բնույ-թից կախված՝ ապահովի միջա-ռարկայական կապերը, փաս-տարկի օրինակ-ներով և ներկա-յացնի՝ ստեղծելով սահիկահանդես, ֆիլմ, անիմացիա, ներկայացում, ձայնագիր և այլն:	4. Նախագծի բնույ-թից կախված՝ ապահովի միջառարկայական կապերը, փաս-տարկի օրինակնե-րով և ներկայացնի՝ ստեղծելով սահիկահանդես, ֆիլմ, անիմացիա, ներկայացում, ձայնագիր և այլն:

		ներկայացում, ձայնագիր և այլն:		
ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ	ՎԵՐԱԲԵՐ-ՄՈՒՆՔ	1. Հարգալից վերաբերմունք դրսևորի մայրենի լեզվի հանդեպ, ճիշտ և գրագետ գործածի:	1. Հարգալից վերաբերմունք դրսևորի մայրենի լեզվի հանդեպ, ճիշտ և գրագետ գործածի:	1. Հարգալից վերաբերմունք դրսևորի մայրենի լեզվի հանդեպ, ճիշտ և գրագետ գործածի:
		2. Համագործակցի ընկերների հետ՝ փաստարկված պաշտպանելով սեփական տեսակետն ու դիրքորոշումը:	2. Համագործակցի ընկերների հետ՝ փաստարկված պաշտպանելով սեփական տեսակետն ու դիրքորոշումը:	2. Համագործակցի ընկերների հետ՝ փաստարկված պաշտպանելով սեփական տեսակետն ու դիրքորոշումը:
		3. Գրավոր և բանավոր խոսքում իր վերաբերմունքն արտահայտի այլ մշակույթների տեքստերի, արժեքների նկատմամբ:	3. Գրավոր և բանավոր խոսքում իր վերաբերմունքն արտահայտի այլ մշակույթների տեքստերի, արժեքների նկատմամբ:	3. Գրավոր և բանավոր խոսքում իր վերաբերմունքն արտահայտի այլ մշակույթների տեքստերի, արժեքների նկատմամբ:
		4. Հաղորդակց-վելիս հարգալից վերաբերմունք դրսևորի հասա կակիցների և մեծահասակների նկատմամբ, լինի պատասխանատու, շրջահայաց, հանդուրժող:	4. Հաղորդակց-վելիս հարգալից վերաբերմունք դրսևորի հասա կակիցների և մեծահասակների նկատմամբ, լինի պատասխանատու, շրջահայաց, հանդուրժող:	4. Հաղորդակց-վելիս հարգալից վերաբերմունք դրսևորի հասա կակիցների և մեծահասակների նկատմամբ, լինի պատասխանատու, շրջահայաց, հանդուրժող:
	ԱՐԺԵՎՈՐՈՒՄ	1. Գնահատի մայրենի լեզուն՝ որպես ազգապահանության, ազգային լեզվամտածողության, մշակութային արժեքների փոխանցման,	1. Գնահատի մայրենի լեզուն՝ որպես ազգապահպանության, ազգային լեզվամտածողության, մշակութային արժեքների փոխանցման,	1. Գնահատի մայրենի լեզուն՝ որպես ազգապահպանության, ազգային լեզվամտածողության, մշակութային արժեքների փոխանցման,

սեփական անձի ձևավորման և ինքնաճանաչման կարևոր գործոն:	սեփական անձի ձևավորման և ինքնաճանաչման կարևոր գործոն:	սեփական անձի ձևավորման և ինքնաճանաչման կարևոր գործոն:
2. Արժևորի հայերենի դերը մտքերը ճիշտ ձևակերպելու և հասկացված լինելու գործում:	2. Արժևորի հայերենի դերը մտքերը ճիշտ ձևակերպելու և հասկացված լինելու գործում:	2. Արժևորի հայերենի դերը մտքերը ճիշտ ձևակերպելու և հասկացված լինելու գործում:
3. Հարգի այլոց իրավունքներն ու դիրքորոշումը:	3. Հարգի այլոց իրավունքներն ու դիրքորոշումը:	3. Հարգի այլոց իրավունքներն ու դիրքորոշումը:
4. Կատարի թարգմանություններ և արժևորի հայերենի լեզվական հնարավորությունները:	4. Կատարի թարգմանություններ և արժևորի հայերենի լեզվական հնարավոր ությունները:	4. Կատարի թարգմանություններ և արժևորի հայերենի լեզվական հնարավորությունները:

Հանրակրթական դպրոցի հիմնական ծրագրի 7-9-րդ դասարաններում ուսումնասիրվում է հայոց լեզվի քերականությունը՝ ձևաբանություն և շարահյուսություն բաժիններով: Քերականության ուսուցումը չի հանգեցնում կանոնների, սահմանումների անգիր իմացության, լեզվաբանական տեղեկությունները նվազագույն չափով են: Շեշտադրվում է լեզվական միավորների հաղորդակցական և ոճական արժեքը: Ուսումնական գործունեությունը հայոց լեզվից հիմնականում գործնական բնույթ ունի, կապված է աշակերտի կյանքի, տրամաբանության, քննադատական մտածողության, լեզվամտածողության զարգացման հետ, կազմակերպվում է միտք շարժող հարցադրումների, իրական հաղորդակցական պայմաններում գործունեություն ծավալելու հիման վրա, այսինքն՝ սովորողը լեզվաբանության օրենքները սեփական փորձով է փաստարկում, հետևաբար նաև յուրացնում:

Ծրագրային նյութի ուսուցման ընթացքում հաջորդական քայլերով կյանքի է կոչվում հիմնական նպատակներից մեկը՝ պատրաստել գրագետ հաղորդակցվող, բանավոր ու գրավոր տրամաբանված խոսք ունեցող անհատ, որն իր սեփական ջանքերով բացահայտում է գիտելիքը: Հայոց լեզվի ծրագրային նյութի ուսուցմանը զուգընթաց կարևորվում է հանրակրթության պետական չափորոշիչով նախանշված կարողունակությունների զարգացումը:

Հանրակրթության հիմնական (5-9-րդ դասարաններ) ծրագրի ավարտին հայոց լեզվի դասընթացից սովորողը

պետք է իմանա՝

- հայերենի ձայնավոր և բաղաձայն հնչյունները, երկհնչյունները, շեշտի տեղափոխությամբ պայմանավորված հնչյունափոխությունը,
- հայերենի ուղղախոսական և ուղղագրական կանոնները,
- բառերի հարաբերության տեսակներն ըստ ձևի և իմաստի,
- խոսքի մասերը, դրանց քերականական հատկանիշերը,
- բառակապակցության տեսակները,
- պարզ նախադասությունը, տեսակները, նախադասության անդամների կապակցման եղանակ-ները,
- լիակազմ և միակազմ նախադասությունները, դրանց կիրառության շրջանակը,
- նախադասության գլխավոր և երկրորդական անդամները,
- բարդ նախադասության տեսակները, դրանց բաղադրիչ նախադասությունները և անդամ-ները, կետադրությունը,
- մեջբերվող խոսքի տեսակները, կետադրությունը:

պետք կարողանա՝

- ճիշտ գրել արտասանությամբ և գրությամբ տարբերվող բառերը՝ կիրառելով հայերենի ուղղախոսական և ուղղագրական կանոնները,
- հայերենի բառակազմական օրինաչափություններին հետևելով՝ կազմել բառեր, ցույց տալ հնչյունափոխությունը, վերլուծել և ցույց տալ բառի կազմությունը,
- տարբերել մենիմաստ, բազմիմաստ հոմանիշ, հականիշ բառերը, դարձվածքները, դրանք տեղին կիրառել բանավոր և գրավոր խոսքում,
- տարբերակել խոսքի մասերը, նշել դրանց քերականական հատկանիշերը, խոսքի մեջ կիրառել ճիշտ ձևափոխություններով,
- կազմել տարբեր տեսակի բառակապակցություններ և տեղին կիրառել բանավոր և գրավոր խոսքում,
- ճանաչել լիակազմ և միակազմ նախադասությունները և կիրառել համապատասխան ոճի խոսքում,
- տարբերակել գոյականական և բայական անդամները, դրանց լրացումները, դրանք ճիշտ կիրառել բանավոր և գրավոր խոսքում,
- նախադասությունները վերլուծել ձևաբանորեն և շարահյուսորեն,
- խոսքի մեջ ճիշտ կիրառել նախադասության անդամների կապակցման եղանակները՝ համաձայ-նություն, խնդրառություն, շարադասություն,
- կետադրել պարզ և բարդ նախադասությունները,
- մեջբերվող (ուրիշի) ուղղակի խոսքը փոխակերպել անուղղակիի և հակառակը, ճիշտ կետադրել,
- կազմել կապակցված խոսք. գրել ստեղծագործական փոխադրություն, երկխոսություն, մենախոսություն, տարաբնույթ շարադրանքներ,

- ելույթ ունենալ լսարանի առջև, համոզիչ և փաստարկված խոսքով հաղորդել մտքերը, գաղափարները,
- դրսևորել քննադատական և ստեղծագործական մտածողություն,
- արտահայտել հստակ դիրքորոշում, վերաբերմունք որևէ հարցի շուրջ, փաստերով հիմնավորել կարծիքը, մարդկանց հետ հաղորդակցվել հայերեն գրագետ խոսքով:

«Հայոց լեզու 7» դասագրքի հիմքում դրված են սկզբունքներ, որոնք թույլ կտան՝

- ապահովել առարկայական ***չափորոշիչով և ծրագրով սահմանված*** գիտելիքների, հմտություն—ների, վերաբերմունքի և վարքագծի ձևավորումը,
- ուսումնական տարբեր կարողություններ ունեցող սովորողների մեջ ձևավորել ինքնուրույն ***ցկյանս սովորելու պահանջմունք,***
- ձևավորել կարդալու և ըմբռնելու, ***ինքնուրույն սովորելու կարողություն,***
- կողմնորոշվել նշանային համակարգերի, տվյալների աղյուսակների մեջ,
- զարգացնել գիտելիքը գործնականում ***կիրառելու***, ***հետաքրքրությունները*** ինքնուրույն ***բավարարելու***, ***սովորել սովորելու*** կարողությունը,
- զարգացնել գիտելիքը ***տարբերակված աշխատանքի*** միջոցով տարբեր իրավիճակ-ներում կիրառելու կարողություն,
- խթանել ***մտքերն ազատ արտահայտելու*** կարողության զարգացումը,
- խթանել սովորողի ուշադրության կենտրոնացումը ուսումնական նյութի վրա ասելիքի/ասվածի ակնառուացմամբ,
- ձևավորել ազգային և համամարդկային մշակույթը համադրող (սինթեզող) ***արժեհամակարգ***,
- զարգացնել ուսումնական ձեռքբերումները գնահատելու, ***սեփական գործողությունները ծրագրելու և կառավարելու*** (համակարգելու) կարողությունները,
- խթանել առարկային հատուկ ***լեզվամտածողության ձևավորումը***:

«Հայոց լեզու 7» դասագրքի բովանդակության կառուցման հիմնական սկզբունքը

Դասագրքի բովանդակային հիմնական գիծը գեղարվեստական և գիտական (գիտահանրա-մատչելի) ստեղծագործությունների ուսումնասիրումն է: Առանձնակի շեշտադրվում են գրվածքի խոսքային կողմը և ստեղծագործության գեղագիտական գործառույթի ուսումնասիրումը՝ որպես ազգային մշակույթի կարևորագույն երևույթի: Գեղարվեստական և գիտական ստեղծագործությունները դիտվում են որպես երկրի պատմությանը, ժողովրդի կենցաղին ծանոթանալու, հայրենի բնությունը ճանաչելու, մարդկանց փոխհարաբերություններին, մարդկային բնավորության բազմազանությանը և վարքագծի տիպերը ճանաչելու և համապատասխան վարքագիծ մշակելու, ինքնակրթվելու և ինքնազարգացման ակտիվություն դրսևորելու միջոց:

«Հայոց լեզու 7» դասագրքի հայեցակարգի հիմնական առանձնահատկությունները

- **Անցումը գիտելիքահեն կրթությունից կարողունակահեն կրթության.**

Նախկինում հանրակրթության գլխավոր նպատակը եղել է միայն սովորողի տարիքին և կարիքներին համապատասխան գիտելիքի փոխանցումը: Երբ այս մոտեցումը դեռ արդիական էր, այն համապատասխանում էր ժամանակի պահանջներին և կարողանում էր լուծել դրան համապատասխան խնդիրները:

Վերջին տարիներին, սակայն, միայն գիտելիքի իմացությունը բազմաթիվ պատճառներով (տեխնոլոգիաների զարգացում, նոր աշխատանքների առաջացում ու դրանց նոր պահանջներ և այլն) չի բավարարում ո՛չ ժամանակների, ո՛չ աշխատաշուկայի և ո՛չ էլ անգամ սովորողի՝ ենթագիտակցաբար դրված պահանջներին: Արդյունքում կրթության դերն ու որակն ընկնում են մարդկանց կյանքում: Վերոնշյալ պատճառներից ելնելով՝ անհրաժեշտություն առաջացավ ստեղծելու նոր չափորոշիչներ:

Նոր չափորոշիչների փոփոխման հետ փոխվեցին նաև կրթության նպատակներն ու պահանջները: Ուղղակի գիտելիքի պաշարը այժմ չի կարող լինել կրթության նպատակ: Նպատակ է դարձել հանրակրթության արդյունքում որոշակի տեսակի մարդու դաստիարակությունը: Ընդհանրական ձևակերպմամբ՝ հանրակրթությունը կփորձի ձուլել մարդ, որն ունի անհրաժեշտ գիտելիք իր և իրեն շրջապատող աշխարհի մասին, հմտություններ՝ այդ գիտելիքը ինքնուրույն գտնելու, զտելու, մշակելու, հիշելու, ընկալելու և գործածելու հաղորդակցման համար, այլ հմտությունների խմբեր, որոնք անհրաժեշտ են լինելու կյանքում և աշխատանքում, արժեքային կուռ համակարգ՝ գիտելիքն ու հմտություններն իր անձի, հասարակության և ազգի զարգացման մեջ կիրառելու, համապատասխան դիրքորոշում/վերաբերմունք՝ ունեցած գիտելիքն ու հմտություններն արժևորելու, ինչպես նաև կամք՝ դրանք գործի վերածելու համար:

Դասագրքում, ինչպես չափորոշիչում, նպատակ է դրվել սովորողին տալու միայն գիտելիքի այնպիսի չափաբաժին, որը նրան անհրաժեշտ է լինելու կյանքում, շեշտը դրվել է տեղեկատվության ընկալման, փոխանցման և հաղորդակցման հմտությունների զարգացման, սովորողի արժեքային ամուր հիմքի ձևավորման վրա: Այս ամենի ամբողջությունն էլ հենց յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում կձևավորի այն կարողունակությունները, որոնք սահմանված են Հանրակրթության պետական չափորոշիչով: Եվ այսպես, գիտելիքն ուղղակի իր սկզբնական իմաստն ավելի է ընդլայնում և դառնում է կարողունակությունների շրջանակի մի օղակ:

Այս կետի արդյունքում դասագրքում կատարվում է՝

- ***Փաստերի և գիտելիքի նվազեցում կամ այլընտրանքային ներկայացում.***

Այսօր առաջնահերթ է ոչ թե դասագրքում նշված տեղեկույթի պարզապես սերտումը, այլ դա սովորողի կողմից իրեն հասանելի տարբեր աղբյուներից գտնելն ու մշակելը, քննարկելն ու վերլուծելը, հետևաբար, դասագրքում ներառված նյութը պիտի լինի նպատակային, ներկայացված լինի փոխգործուն (ինտերակտիվ) և հետաքրքիր, չպարտադրի հեղինակի մոտեցումներն ու թույլ տա աշակերտներին ինքնուրույն ընկալել և հասկանալ ընդգկրված նյութն ու դրա կիրառելիությունը:

Դասագրքում ընդգրկված նյութերը նպատակային են և ուղղված են թեմայի սկզբում ձևակերպված նպատակներից որևէ մեկին:

Նյութի հնարավոր յուրաքանչյուր կետ ներկայացված է փոխգործում կամ այլընտրանքային եղանակներով, որոնք թույլ կտան սովորողին ավելի հեշտ տեսնել, հիշել և ընկալել նյութը:

- ***Հարցաշրջումների ստուգիչ բնույթից անցում վերլուծական, կառուցողական բնույթի.***

Դասագրքում տեղ գտած հարցադրումները նախատեսված չեն միայն ստուգելու աշակերտի գիտելիքը, այլև ունեն վերլուծական, կառուցողական բնույթ։

- **Սովորել սովորելու գործընթացի ներմուծումը դասագրքեր։ Սովորողների հմտությունների ակտիվացումը, սովորողի մտածական մակարդակում ուսումնական գործընթացի ակտիվացումը.**

Ի՞նչ է սովորել սովորելու գործընթացը։ Սա այն ճանապարհն է, քայլաշարը, որին երեխան պիտի տիրապետի ուսումնառության և կյանքի առաջադրած ցանկացած խնդիր ինքնուրույն հասկանալու և լուծելու համար։ Դասագրքում այս գործընթացի ներմուծումը նշանակում է, որ առաջին հերթին սովորողը պիտի կատարի նյութերի նպատակային զտում, ապա տիրապետի այդ նյութերի հետ աշխատելու հմտություններին, որից հետո դրանք պիտի վերածվեն գիտակցական ու անընդհատ գործընթացների։

Ինչպես արդեն նշվել է, տեխնոլոգիաների զարգացման հետ սովորողի և ընդհանրապես ցանկացած մարդու համար հասանելի դարձան անհամար նյութեր բոլոր ոլորտներից և բոլոր մակարդակներում։ Ընդլայնվեցին նաև նյութի տեսակները, գրավոր նյութերին ավելացան տեսաձայնային նյութերը։ Արդյունքում հանրակրթության առջև դրվեց ևս մեկ խնդիր՝ սովորողի կողմից նյութի ճիշտ ընտրությունը, անհամար նյութերից արժանահավատ և պետքական նյութի ընտրությունն ու օգտագործումը։ Խնդիրը լուծելու համար ամենակարևոր գործոնը սովորել սովորելու գործընթացն է, որին էլ մեծ ուշադրություն է դարձվում դասագրքում։ Սա հմտությունների մի համակարգ է, որն ուղղված է երեխային սովորեցնելու՝ ինչպես սովորի, ինչպես օգտագործի ձեռքի տակ եղած ցանկացած նյութ, ինչպես այդ նյութից կարողանա միայն իրեն պետքական տվյալները դուրս բերել, ինչպես դրանք ճիշտ մշակի, ապա օգտագործի։ Այս համակարգում բազմաբնույթ հմտությունների խմբեր են մտնում, որոնց կանդրադառնանք ստորև։

Դասագրքի կառուցվածք

«Հայոց լեզու 7» դասագիրքը իր կառուցվածքով համապատասխանում է չափորոշչով և ծրագրով նախատեսված բովանդակային բաղադրիչներին (գիտելիք, կարողություն և հմտություն, վերաբերմունք/դիրքորոշում, արժեքային համակարգ)։

Գիտելիքի առումով դասագիրքը ներառում է հայոց լեզվի քերականության «Ձևաբանություն» բաժնի «Խոսքի մասեր», «Գոյական անուն», «Ածական անուն», «Թվական անուն», «Դերանուն», «Բայ» ենթաբաժինները։ Կարողունակությունների ձևավորման առումով դասագրքի ամեն մի թեմատիկ միավոր ներառում է առաջադրանքների որոշարկված խմբեր՝ «Բառապաշար» (եզրույթներ, անծանոթ բառեր և դրանց կիրառում), «Հմտություններ» (խոսքի ընկալման, վերլուծման, համեմատման, գնահատման վարժանք), «Քննարկում» (մգրոհ և բանավեճեր), «Արժեքներ և վերաբերմունք» (տեսակետների և դիրքորոշումների արտահայտում), «Նպատակային խոսք» (խոսքի վերարտադրումն ու ստեղծումը խթանող ուսումնական ելույթների ու տեսանյութերի, զեկուցումների, սահիկաշարերի պատրաստում ու ցուցադրում, հարցազրույցների, դերախաղերի, մնջախաղերի, թատերախաղերի կազմակերպում ու ներկայացում), «Ինքնուրույն աշխատանք», «Հետազոտում ենք» և «Նախագծային աշխատանք» (գիտաուսումնական հետազոտությունների անհատական և խմբային իրականացում)։ Ամեն թեմատիկ միավորի առանցքում տեղեկատվական, գիտահանրամատչելի կամ գեղարվեստական ոչ մեծ գրվածք է, որի շուրջ ծավալվում են առաջադրանքները, գիտելիքի կիրառումները, խաչվող հասկացությունների քննարկումները, արժեքային համակարգերի բացահայտումները։

Գիտելիքի և առանցքային գրվածքի հիման վրա հաստատվում ու քննարկվում են միջառարկայական բազմազան ու բազմաբնույթ կապեր: Հատուկ տեղ ունեն լսանյութերի վրա հիմնված ուսումնական առաջադրանքները: Յուրաքանչյուր թեմատիկ միավոր ամփոփվում է ինքնաստուգման առաջադրանքով: Դասագրքում արագ կողմնորոշվելուն նպաստելու համար օգտագործված են հուշող պատկերակներ և գունային տարբերանշաններ: Նկատի ունենալով դասագրքի թղթային տարբերակի ծավալային սահմանափակումները, ինչպես նաև արդիական տեխնիկական միջոցների ներգրավման անհրաժեշտությունը՝ ուսումնատեղակատվական զգալի քանակությամբ նյութեր և առաջադրանքներ մատուցված են էլեկտրոնային տարբերակով, որոնց մատչելիությունն ապահովված է հղումների ճկուն համակարգով (ՔյուԱր կոդեր և այլն):

Դասագրքում ընդգրկված ծրագրային թեմաներից գրեթե բոլորը ունեն հետևյալ կառուցվածը՝

- ✓ Գիտելիք
- ✓ Բառապաշար
- ✓ Ռազմավարություն/ հմտություն
- ✓ Քննարկման հարցեր
- ✓ Գրվածք/Տեքստայի նյութ
- ✓ Արժեք և վերաբերմունք
- ✓ Նպատակային խոսք
- ✓ Հետազոտական կամ ինքնուրույն աշխատանք
- ✓ Լսանյութեր
- ✓ Լրացուցիչ առաջադրանքներ
- ✓ Ինքնագնահատում

Ի տարբերություն վերոբերյալ բաժինների՝ չափորոշչով և ծրագրով նախատեսված խաչվող հասկացությունները և միջառարկայական կապերը արտացոլվել են նշված բաժիններում ներառված առաջադրանքներում:

Այս կառուցվածքը համապատասխանում է նաև «Զանգակ» հրատարակչության կողմից ներկայացված դասագրքի կոնցեպտին:

«Գիտելիք» բաժնում ներկայացված ծրագրային նյութերը համապատասխանում է սովորող-ների տարիքային առանձնահատկություններին, ներկայացված են պարզ, մատչելի սահմանումներով: Նյութերի մի մասը ներկայացված է աղյուսակների տեսքով: Գիտելիք բաժնին գրեթե միշտ հաջորդում են առաջադրանքներ, որոնք ամրապնդում են նոր նյութի յուրացումը:

Առանց **«Բառապաշար»** բաժնի դասագիրքը պատկերացնել հնարավոր չէ: Սա շատ կարևոր բաժին է քանի որ հենց բառապաշարն է սովորողի համար առարկան դարձնում գիտություն, խորացնում նրա՝ առարկայի ընկալման մակարդակը: Ըստ բառապաշարի իմաստի և կիրառության՝ «Բառապաշար» բաժինը գրեթե միշտ բաժանումներ ունի.

Եզրույթներ - Այս բաժինը բառապաշարի ամենաառաջնային ու տեսանելի մասն է: Առարկան ընկալելու համար շատ կարևոր է նաև խոսել հենց այդ առարկայի, գիտության լեզվով՝ եզրույթներով: Այստեղ բացատրվում են նոր թեմային վերաբերող եզրույթները:

Անծանոթ բառեր-բացատրվում են գրվածքի/տեքստային նյութի անծանոթ բառերը: Գրվածքում առկա անծանոթ բառերի բացատրությունները կօգնեն սովորողներին ավելի արագ ընկալել նյութի բովանդակությունը:

Եթե գրվածքում կլինեն անծանոթ բառեր, որոնք կարիք կունենան բացատրության, ապա ուսուցիչը նախապես՝ նախորդ դասի ընթացքում կամ վերջում պետք է հանձնարարի սովորողներին տանը որոնել այդ բառերի բացատրությունը:

Մեթոդի նպատակն է սովորողների մոտ ձևավորել հետազոտելու, բառարանից ինքնուրույն օգտվելու կարողություն և հմտություն:

«Բառապաշար» բաժնին գրեթե միշտ հաջորդում են առաջադրանքներ՝ ուղղված եզրույթները, անծանոթ բառերը հասկանալու և հիշելու:

«Քննարկման հարցեր» բաժնում տրվում է հարց, որը քննարկման, բանավեճի, կարծիքի, տեսակետի արտահայտման հնարավորություն է ընձեռում: Ընդ որում, հարցն անմիջականորեն կապ ունի և՛ նոր ուսումնական նյութի հետ, և՛ թեմայում ընդգրկված գրվածքի հիմնական գաղափարի հետ: Հարցի շուրջ քննարկումը ևս նպաստում է նոր նյութի, գրվածքի ընկալմանը, տվյալ թեմայի հիմնական հասկացությունների, գաղափարի վերհանմանը: Կարելի է ասել՝ նաև կատարում է մտագրոհի դեր՝ նախապատրաստելով սովորողներին տեքստային նյութի հետ աշխատանքին: Տեքստային նյութերի ընտրությունը կատարվել է նպատակային, ընգգրկված են տեղեկատվական, գիտահանրամատչելի կամ գեղարվեստական ոչ մեծ գրվածքներ, որոնք համապատասխանում են սովորողների տարիքային առանձնահատկություններին: Տեքստային նյութերը բաժանված են հատվածների կամ պարբերությունների՝ ներառելով դասագրքի տարբեր բաժիներին վերաբերող առաջադրանքներ:

«Հմտություններ» բաժնում ընդգրկված առաջադրանքները հիմնականում ապահովում են չափորոշչով սահմանված կարողություն և հմտություն բաղադրիչների ձևավորումը սովորողի մոտ: Գրելու, կարդալու, խոսելու հմտությունները արտացոլված են առաջադրանքների տեսքով: Դասագրքում ընդգրկված հմտությունների միջոցով սովորողների մոտ ձևավորվում է կանխատեսելու, կարևոր միտքը դուրս բերելու, մտապատկերելու, կապեր ստեղծելու, հարցադրումներ անելու, համեմատելու, հակադրելու, եզրակացություններ անելու կարողություններ և հմտություններ:

Տեքստն ընթերցելուց հետո տարաբնույթ առաջադրանքների միջոցով ձևավորվում և զարգացվում են սովորողների թե՛ առարկայական, և թե՛ վերառարկայական հմտությունները:

- **Կարևորի դուրսբերման հմտություն**

Կարևորն այն մտքերն են, որոնք ընկած են տեքստի բովանդակության առանցքում: Սովորողները փորձում են զանազանել տեքստային հատվածի կարևոր միտքը դրա հետ կապված կամ դրա մասին պատմող մանրամասն տեղեկություններից ու փաստերից: Նրանք պետք է հասկանան, որ տեղեկությունը կարող է լինել հետաքրքիր, բայց տեքստը հասկանալու համար՝ բոլորովին ոչ պարտադիր:

- **Եզրակացություն կատարելու հմտություն**

Եզրակացություն անելը տրամաբանական հետևություն անելն է նախագիտելիքների, տեքստում եղած փաստերի ու սեփական փորձի հիման վրա: Սովորողները «կարդում են տողարանքները», որպեսզի դուրս բերեն տեղեկություն, որը չի տրվել հեղինակի կողմից բացահայտորեն, բայց որն անհրաժեշտ է, որ տեքստը դառնա հասկանալի: Եզրակացություն կարելի է անել.

· կերպարների մասին
· թեմայի և հեղինակի մտադրության մասին
· անծանոթ բառերի նշանակության մասին
· առաջադրանքի կամ խնդրի հնարավոր պատասխանների մասին
· երևույթների ու դրանց հետևանքների մասին:

- **Մտապատկերում կատարելու հմտությունը**

Մտապատկերումը մտային պատկերի ձևավորման գործընթաց է գրավոր կամ բանավոր տեղեկությունների հիման վրա: Սովորողները ստեղծում են տեքստի/նկարագրության տեսողական պատկերներ մտքում կամ թղթի վրա: Տեքստերում նրանք մտապատկերում են նաև նկարագրված ձայնը, հոտը, համը, սառը կամ տաք լինելը և այլն: Կարդալու ընթացքում նրանց մտապատկերները փոխվում են, ինչպես ֆիլմերում: Մտապատկերումն ակտիվացնում է սովորողի մտածական տարբեր շերտեր:

- **Հարցադրման և հարցերին պատասխանելու հմտություն**

Ճիշտ հարցեր ձևակերպելը արժեքավոր պատասխաններ ստանալու գրավականն է: Հարցադրումներն անում է ընթերցողը, և ինքն էլ պատասխանում է դրանց՝ տեքստն ընկալելու համար: Սովորողները կիրառում են իրենց գիտելիքը և տեքստի տեղեկատվությունը, ստեղծում բացահայտող հարցեր, որոնք կարող են ուղղորդիչ լինել ակնհայտ և քողարկված տեղեկություններ դուրս բերելիս:

- **Կապերի ստեղծման հմտություն**

Կապերի ստեղծումը մտովի զուգահեռների անցկացումն է արդեն իսկ իմացածի և տեքստում տրված տեղեկույթի միջև: Կա ընթերցանության ընթացքում կապեր ստեղծելու 3 հիմնական տեսակ.

• Տեքստ և ընթերցող (Տ — Ը) - կապ է ստեղծվում տեքստի և ընթերցողի անձնական փորձառության միջև:

• Տեքստ և տեքստ (Տ — Տ) - ընթերցվող տեքստը զուգորդվում է նախկինում կարդացած տեքստի հետ:

• Տեքստ և աշխարհ (Տ — Ա) - կապ է ստեղծվում ընթերցվող տեքստի և աշխարհում կատարված որևէ նման իրավիճակի միջև:

- **Դիտարկում կատարելու հմտություն**

Դիտարկումն ընթերցածի ընկալման գնահատումն է և, անհրաժեշտության դեպքում, ընթերցելու այլ ռազմավարությունների կիրառումը: Սովորողները գնահատում են տեքստի իրենց ընկալումը և անհրաժեշտության դեպքում կիրառում հաստատուն ռազմավարություններ (վերանայում, վերընթերցում, ընթերցանության շարունակում, հարցադրում, ընթերցելու մակարդակի կարգավորում, ամփոփում, պարզաբանում, պատկերում, կանխագուշակում, կապերի ստեղծում, օգնության դիմում) ընկալման դժվարությունները հաղթահարելու համար:

- **Տեքստի կառուցվածքային և բովանդակային ճանաչում**

Տեքստի ընկալումն ու վերլուծությունը սկսվում է դրա խորքային ճանաչումից: Հասկանալով տեքստի բնույթը, նպատակը, կառուցվածքային առանձնահատկությունները՝ նոր միայն կարելի է այն ավելի խորը զննության ենթարկել: Օրինակ՝

1. Առանձնացնել պատճառահետևանքային կապերը, առաջ քաշված հիմնական խնդիրներն ու դրանց լուծումները:
2. Նկատել ու հասկանալ տեքստի կառուցվածքային բաժանումները՝ վերնագրեր, ենթավերնագրեր, սկիզբ, ընթացք, ավարտ:
3. Առանձնացնել նյութի տարբեր հատվածները՝ գործողությունների հաջորդականություն, նկարագարդում և այլն:

- **Համեմատման և հակադրման հմտություն**

Որպես ընթերցելու ռազմավարություն՝ համեմատումն ու հակադրումն առանցքային նշանակություն ունեն, քանի որ գործ ունեն նյութի դասակարգման հետ: Սովորողները տեքստում պետք է գտնեն իրար նման կերպարներ, երևույթներ, հասկացություններ, համեմատեն նախորդ գիտելիքները նորի հետ: Թե՛ համեմատելու, և՛ թե հակադրելու ընթացքում ինքնաբերաբար վերլուծում, նկարագրում, բնութագրում են նյութը, դասակարգում, օրինաչափ ու համակարգված մոտեցում ցուցաբերում:

- **Պատճառը և հետևանքը հասկանալու հմտություն**

Երբ սովորողները կարդում են, պետք է փորձեն հասկանալ, թե ինչ է պատահում, և ինչու է դա պատահում: Երբեմն պատճառները չեն հաղորդվում, և այն բացահայտելու համար սովորողները պետք է օգտվեն տեքստի մեջ եղած տեղեկություններից և իրենց գիտելիքից: Այս ռազմավարության համար կարևոր քայլ է «բանալի» բառերի առանձնացումը: Դրանք են՝ որովհետև, այսպիսով, քանի որ, հետևաբար, որպես արդյունք: Սովորողները պետք է հասկանան, որ հետևանքը կարող է ունենալ շատ պատճառներ, և որ մեկ պատճառը կարող է ունենալ մի քանի հետևանք: Կարևոր է նաև գտնել հետևալ հարցերի պատասխանները՝ ի՞նչ է պատահել: Ինչո՞ւ է դա պատահել:

- **Նյութի վերապատմելու և քննադատական մտածողությունը զարգացնելու հմտություն**

Այս հմտությունը զարգացնող ռազմավարությունը ուղեկցվում է նյութի հիմնական տեղեկատվության դուրսբերմամբ, ապա դրա վերաշարադրմամբ: Կարևորվում է սեփական բառերի ու ձևակերպումների գործածությունը: Շատ անգամ միայն ինքնուրույն նյութը վերապատմելիս կարելի է բացահայտել դրանում անհասկանալի մնացած մասերը, ու կենտրոնանալ դրանց վրա: Մյուս կողմից կարևոր է նաև նյութի նկատմամբ դիրքորոշում ձեռք բերելու, դրա կառուցվածքային ու բովանդակային արժեքը գնահատելու ռազմավարությունը: Առանց սրա նյութը աշակերտի գիտակցական/գիտելիքային պատկանելությունը չի դառնում, հետագայում էլ հեշտ մոռացվում է:

7. Արժեքների և վերաբերմունքի ձևավորման բաժին

Այս բաժնում զանազան առաջադրանքների միջոցով սովորողների հետ մտերմիկ զրույց է վարվում տեքստի հիմքում ընկած վարքաբանական և բարեկրթական տարբեր արժեքների մասին (ազնվություն, երախտագիտություն, ընկերասիրություն…): Անդրադարձ է կատարվում արժեքներին՝ հետաքրքրաշարժ ձևերով ներկայացնելով տվյալ արժեքը կրելու կարևորությունը սեփական անձի, շրջապատի, երկրի համար: Ճանաչելով այս արժեքները, սովորողները կարող են փոխել իրենց և իրենց վերաբերմունքը շրջապատի նկատմամբ:

8. Նպատակային խոսքի բաժին

Բաժնում տրվող առաջադրանքները ենթադրում են, որ սովորողները պետք է խոսք հյուսեն, մտքեր արտահայտեն հարցի շուրջ՝ հենվելով իրենց կենսափորձի վրա, հաղորդեն որոշակի տեղեկություններ որոշ թեմաների շուրջ: **«Նպատայակին խոսք»** բաժնում ներառված են գրելու և խոսելու ռազմավարությունները, որոնց կիրառությունը ապահովվում է տարբեր բնույթի առաջադրանքներով՝ գործնական և հետազոտական աշխատանքներ, միջոցառումներ, ցերեկույթներ:

Գրելու ռազմավարություն:

Այստեղ հիմնականում լինելու են խառը մտքերն ի մի բերելու, դրանք գրառելու, մտքերի մեջ առաջնայինն ու երկրորդականն առանձնացնելու, դրանք հարստացնելու, հատուկ ընտրված և համապատասխան բառապաշարին պատկանող բառեր օգտագործելու և հանձնարարված ձևաչափով այս ամենը գրագետ շարադրելու հմտություններ: Առաջադրանքները սովորողից պահանջում են սեփական մտքերի գրավոր ու գրագետ համառոտ ներկայացում:

Խոսելու ռազմավարություն:

Քանի որ այս ռազմավարությունը ևս մտքերի գրագետ ներկայացմանն է ուղղված, սրան վերաբերող բազմաթիվ հմտություններ համընկնում են նախորդի հետ: Սակայն ավելանում են նաև որոշ

հմտություններ ևս, ինչպիսիք են՝ գրագետ բանավեճի, քննարկման, խոսքի ճիշտ կառուցման, շեշտադրումների ու դադարների ճիշտ օգտագործման հմտությունները։

10. Գնահատման բաժին

Այս բաժնում սովորողը կատարում է ինքնագնահատում, թե տեքստն ուսումնասիրելիս ինչն ինքը լավ կարողացավ անել։ Անհրաժեշտ է սովորողներին ուղղորդել, որ նա պետք է հետևողական լինի, որպեսզի իր կողմից չյուրացրած վերջնարդյունքների շուրջ աշխատի և բարելավի կարողություններն ու հմտությունները։ Ինքնագնահատումը նեկայացված է աղյուսակի տեսքով, որտեղ սովորողը նշումներ է անում՝ բերելով օրինակներ։

Դասագրքի պատկերազարդման տարրերը համապատասխանում են սովորողների տարիքային առանձնահատկություններին, ճիշտ են համադրվում գրվածքին, ըստ անհրաժեշտության առկա են մակագրություններ։ Ունեն թեմատիկ, գեղագիտական, ճանաչողական նշանակություն։

Ուսումնական նյութերը (տեքստերը) օգնում են ավելի լավ յուրացնելու և ամրապնդելու <<Գիտելիք>> բաժնի թեմաները, ինչպես նաև միջառարկայական կապեր են ստեղծում։ Կարդալով գրվածքը և կատարելով դրա ընթացքում և դրանից հետո տրված առաջադրանքները՝ սովորողները լավ կյուրացնեն տվյալ թեման։

Պատկերազարդման տարրերի և ուսումնական նյութերի միջև տարբեր հարցադրումներով կարելի է կապեր ստեղծել՝ նպաստելով նպատակային խոսքի զարգացմանը։

Ուսումնական նյութի յուրացման համար առկա են նոր հասկացությունների բառարան, լուսաբանող գծապատկերներ, միևնույն նյութին առնչվող տարաբնույթ առաջադրանքներ, որոնցից սովորողները կարող է ընտրել և կատարել՝ ըստ իրենց կարողության, նախասիրության կամ ուսումնառության ոճի։ Գործնական առաջադրանքները սովորողներին հնարավորություն կտան ոչ միայն գիտելիքները կիրառելու, այլև փորձարկումներով ինքնուրույն եզրահանգումներ անելու։

Առկա են նաև կատարողական-վերարտադրողական և ստեղծագործական – կառուցողական բնույթի գործնական առաջադրանքներ։

Ուսումնական գրվածքները նպաստում են սովորողիների քննադատական, ստեղծագոր-ծական մտածողության զարգացմանը, ապահովում են հաղորդակցում համամարդկային մշակու-թային արժեքներին, հնարավորություն են տալիս կազմակերպելու քննարկումներ և բանավեճեր։

Ցանկանում ենք հիմնավորել դասագրքում գոյականը հինգ հոլովով ներկայացնելու մեր մոտեցումը։

Նախ և առաջ պետք է հասկանալ հոլովների տարբերակման սկզբունքը։ Քանի որ հոլովը ձևաբանական կարգ է և որոշվում է ըստ ձևի, ուրեմն եթե չկա յուրահատուկ ձև, ապա չկա և առանձին հոլով։ Միևնույն հոլովը կարող է գործածվել շարահյուսական զանազան հարաբերություններ արտահայտելու և տարբեր պաշտոններ ձևավորելու համար։ Բայց չի կարելի պաշտոնը նույնացնել հոլովի հետ և ըստ պաշտոնի հոլով առանձնացնել (օրինակ՝ ուղիղ խնդրի համար՝ հայցական հոլով)։ Այդպես խախտվում ու շրջվում է լեզվի կառուցվածքի մակարդակների ստորակարգությունը. շարահյուսությունն է հիմնվում և կառուցվում ձևաբանության վրա, այլ ոչ թե հակառակը։

Չի կարելի նաև շփոթել կամ նույնացնել քերականական տարբեր կարգեր։ Օրինակ՝ գոյականի սեռական հոլովը տրականից փորձում են տարբերակել հոդ չստանալու հանգամանքով։ Այդ տրամաբանությամբ ուղղականից կարելի է առանձնացնել կոչական հոլով, քանի որ կոչականն էլ հատկացուցչի պես հոդ չի վերցնում (առման կարգի նկատմամբ չեզոք է)։

Հինգ հոլովի համակարգում չկան այսպիսի տրամաբանական խախտումներ, հակասություններ, խառնաշփոթ ու անհետևողականություն։

Ի վերջո, յոթ հոլովի համակարգը մնացորդ է լատիներենի ու մասամբ գրաբարի համակարգերից։ Դա դինոզավրի կմախք է՝ հագցրած արդի հայերենի անվանական հոլովման վրա։ Վաղուց էր պետք թոթափել դա, սակայն մի ժամանակ պարտադրվում էր լեզվաբանների հակաաբեղյանական թևի կողմից, իսկ վերջին ժամանակներս հետևանք էր արատավոր իներցիայի։

Մի մանկավարժական նկատառում ևս. շարահյուսական պաշտոնով հոլովի որոշումը ձևաբանություն ուսումնասիրելիս տանում է շարահյուսության բաժին, իսկ 7-րդ դասարանի երեխան, որ դեռևս շարահյուսություն չի անցել, ինչպե՞ս հասկանա այս խառնաշփոթը։

Ուրեմն պետք է ճանաչել միայն այն հոլովները, որոնք ունեն սեփական ձև։ Իսկ դրանք հայերենի գոյական անվան դեպքում հինգն են՝ ուղղական, սեռական-տրական, բացառական, գործիական, ներգոյական։

Թվականի տեսակների դասակարգումը կատարելիս հաշվի են առնվել դրանց իմաստային և կառուցվածքային հատկանիշները, ինչպես նաև համապատասխանությունը մաթեմատիկայում կիրառվող եզրույթներին։ Օրինակ՝ մաթեմատիկայում սկզբունքորեն չեն տարբերվում բնական (ամբողջ) թվերը և կոտորակները. բոլորն էլ հավասարապես տեղ ունեն թվային առանցքի վրա։ Ուստի դրանք դիտարկված են նույն խմբի մեջ։ Մինչդեռ բաշխական թվականը իմաստային սկզբունքային տարբերություն ունի քանակական թվականից, քանի որ նշում է ոչ թե քանակ ինքնին, այլ մեկ այլ քանակի հավասար մասերի ցրված ամբողջություն։ Կամ՝ նախկինում կիրառվող «բացարձակ թվական» եզրույթը մաթեմատիկայում այդ իմաստով գոյություն չունի, ուստի դա անտեսված է։

Համընդհանուր ներառական կրթության ապահովումը դասագրքում

Ներառական կրթության համատեքստում իրականացվող ուսումնադաստիարակչական գործունեության հիմքում այսօր կարևորվում է կրթական համակարգերի հարմարեցումը բոլոր սովորողների կարիքներին ու առանձնահատկություններին, որտեղ մանկավարժի ուշադրության կենտրոնացումն իրականացվում է սովորողների բազմատարրության վրա։

Ներառական կրթության իրականացման գործընթացում կարևոր է կրթության կազմակերպման համար անհրաժեշտ հարմարեցումները։ Այս նկատառումից ելնելով՝ ներկայացնում ենք որոշ հարմարեցումներ՝ որոնք ներառել ենք մեր դասագրքում։

1. Նյութը ներկայացնելիս օգտագործել ենք նկարներ, սիմվոլներ։
2. Գործողությունների հաջորդականությունը ներկայացված է համապատասխան պատկերանշաններով՝ հիմնվելով տեսողական ընկալման վրա։
3. Դասանյութերից յուրաքանչյուրը ունի հստակ քայլաշար։
4. Առաջադրանքների ձևակերպումները հստակ են և մեկ գործողություն ակնկալող։
5. Նյութերի մի մասը ներկայացված է աղյուսակներով, գծապատկերներով։
6. Ընդգծված են կարևոր արտահայտությունները, բառերը և առանձին նշանները։
7. Առաջադրանքի հրահանգները ներկայացված են գծապատկերներով, սխեմաներով։
8. Առաջադրանքների մի մասը լսանյութերով է ներկայացված։
9. Նախապես ուսուցանվում է բառապաշարը՝ դրանք հստակ կապելով սովորողների փորձառության ու արդեն իսկ ունեցած գիտելիքներին։
10. Կիրառված է հասկացությունների քարտեզագրում։

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Թեմատիկ պլանավորումը տրված է աղյուսակի ձևով, որտեղ նշված են թեմայի անվանումը և նպատակը, թեմայի բովանդակությունը, ժամաքանակը և տրված թեմայի վերջնարդյունքները։

Տրված թեմատիկ պլանի նմուշօրինակը ընդհանուր կողմնորոշման և օգնության համար է, օգնելու է ուսուցչին՝ կողմնորոշվելու նոր պահանջների, նորովի ուսուցման իրականացմանն ու ծրագրային փոփոխություններին։

Ուսուցիչն ազատ է թեմատիկ պլանավորման կազմման, ժամաքանակի տնօրինման գործում։

Թեմատիկ պլանավորում
Հայոց լեզու 7-րդ դասարան
Տարեկան 102 ժամ
Շաբաթական 3 ժամ

Թեմայի անվանումը և նպատակը	**Թեմայի բովանդակությունը**	**Ժամաքա-նակը**	**Վերջնարդյունքները**
Անցածի կրկնություն	Ուղղագրություն, ուղղախոսություն, հնչյունափոխություն Բառագիտություն Բառակազմություն	**3**	Սովորողը պետք է կիրառի ուղղագրական դժվարություն ունեցող բառերը գրավոր խոսքում: Զանազանի և բացատրել հոմանիշ բառերի ոճական տարբերությունները: Դասակարգի բառերն ըստ կազմության, բացատրի բառերի կազմության ձևերը:
ԹԵՄԱ 1. ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ Նպատակը՝ Զնավորել համակարգային մտածողություն, դասակարգելու, տարբերակելու կարողություն:	Խոսքի մասեր	**2**	1. *Տարբերակի* ընդհանուր հատկանիշներ ունեցող բառերը: 2. *Դասակարգի* բառերն ըստ գործածության հաճախականության, ըստ տրված հարցերի: 3. *Զանազանի* նրանց գործածության շրջանակները, *բերի* օրինակներ: 4. *Ստեղծի* երկխոսություն, պատմություն տրված բառաշարքով:
ԹԵՄԱ 2. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ **Նպատակը՝** 1. Զնավորել բառերն ըստ ընդհանուր հատկանիշների դասակարգելու կարողություն և խոսք	1. Տեսակները՝ անձնանիշ, իրանիշ, հատուկ և հասարակ 2. Բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությունը 3. Գոյականի թիվը՝ եզակի և հոգնակի 4. Հավաքական,	**21**	1. *Դասակարգի* գոյականներն ըստ ոլորտների և *կիրառի* խոսքում: 2. *Տարբերակի* գոյականի ձևափոխություններն ըստ հոլովների և *ճիշտ կիրառի* հոլովումները:

կազմելու հմտություններ: 2. Ընդլայնել սովորողի իմացության շրջանակը: 3. Հարստացնել սովորողների բառապաշարը:	անեզական և անհոգնական գոյականներ 5. Գոյականի որոշյալ և անորոշ առումները 6. Գոյականի հոլովները 7. Հոլովում-արտաքին, ներքին, այլաձև, զուգաձև		3. *Կազմի* եզակի թվով դրված համագործածական բառերի հոգնակի թիվը, *ճիշտ կիրառի* գրավոր և բանավոր խոսքում: 4. *Ներկայացնի* գոյականի՝ հոգնակիում ստացած վերջավորությունները, *ճիշտ* կիրառի խոսքում: 5. *Փոխարինի* հոգնակիի կազմության հոմանիշ ձևերն իրարով և *կիրառի* համապատասխան դեպքերում: 6. *Խմբավորի* հավաքական և հոգնակի թվով գոյականները, *թվարկի* նրանց տարբերությունները, *բերի* օրինակներ: 7. *Տարբերակի* հոդերը և *ճիշտ կիրառի* խոսքում: 8. *Համեմատի* տարբեր ոճերի տեքստերը՝ առանձնացնելով կիրառված գոյականները: 9. *Փոխադրի* պարբերություններ, հատվածներ՝ ըստ տրված պահանջի:
Թեմա 3. ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ **Նպատակը՝** ● Նպաստել խոսքում հատկանիշ ցույց տվող բառերի նպատակային և ճիշտ կիրառմանը: ● Զարգացնել պատկերավոր խոսք:	**1.** Ածական: Հատկանիշները **2.** Կիրառությունը 2-րդ հատված **3**. Տեսակները Համեմատության աստիճանները Կազմությունը	**5**	1. *Ճանաչի* ածականի հիմնական հատկանիշները: 2. *Կիրառի* խոսքում ուղիղ և փոխաբերական իմաստներով: 3. *Կազմի* պատկերավոր խոսք: 2-րդ հատված 4. *Տարբերակի* ածականի տեսակները:
ԹԵՄԱ 4. ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ **Նպատակը՝**	1. Թվականի տեսակները՝ քանակական (բացարձակ,	**9**	1. Ճանաչի թվականները: 2. Անսխալ *գրի* և *արտասանի* թվականները:

Զնավորել թվականի տեսակները խոսքում ճիշտ կիրառելու կարողություններ: *Նպաստել* փաստարկված խոսք կազմելու մեջ թվականների արժևորմանը:	կոտորակային, բաշխական) և դասական 2. Թվականի կազմությունը և ուղղագրությունը: Թվականի համաձայնության և անհամաձայնության դեպքերը 3. Թվարկման գրավոր արտահայտության ձևերը 2-րդ հատված 4. Թվականների բուն և փոխանվանական կիրառությունները		3. Ճիշտ *կարդա* տառակապակցությունների թվային արժեքները: 4. *Տարբերակի* թիվ, թվային կարգ, քանակ, թվանշան հասկացությունները: 5. *Գնահատի* և *հիմնավորի* թվերի կիրառության հաճախականությունը տարբեր ոճերում: 2-րդ հատված 6. *Ստեղծի* տեքստ, պատմություն:
ԹԵՄԱ 5. ԴԵՐԱՆՈՒՆ **Նպատակը՝** ● Զնավորել դերանունների դերն ընկալելու, տեսակների դերը կարևորելու, ուղղակի և անուղղակի խոսքում ճիշտ կիրառելու հմտություններ:	1. Դերանուն 2. Դերանվան տեսակները (անձնական, ցուցական, փոխադարձ, հարցական/հարաբերական, որոշյալ, անորոշ, ժխտական): Դերանունների հոլովումը 3. Հոդեր: 2-րդ հատված 4. Հոդերի տեսակները	**12**	1. *Ճանաչի* դերանունները: 2. *Զնափոխի և կիրառի* դերանվան տարբեր տեսակներն ըստ անհրաժեշտության: 3. Դերանունների հոմանիշ և հականիշ զույգերը *ճիշտ կիրառի* գրավոր և բանավոր խոսքում: 2-րդ հատված 4. *Կառուցի* խոսք՝ դերանվան տարբեր տեսակների և հոդերի ճիշտ կիրառությամբ: 5. Հոդերը *փոխարինի* դերանուններով և հակառակը: 6. *Փոփոխի* և *ստեղծի* տեքստեր՝ կիրառելով դերանուններ:
ԹԵՄԱ 6. ԲԱՅ **Նպատակը՝** 1. Զնավորել տարբեր բնույթի նախադասություններում բայաձևերը ճիշտ կիրառելու, բայն իր բոլոր ձևերով խոսքի մեջ կիրառելու	1. Բայը՝ որպես խոսքի մաս, լծորդությունը 2. Բայի կազմությունը – պարզ և ածանցավոր բայեր 3. Բայի դիմավոր ձևեր: Դեմք, թիվ, ժամանակ, եղանակ: Բայի եղանակները: Կազմությունն ու	**36**	1. Տարբեր խոսքի մասերից *կազմի* բայեր, *տարբերակի* դիմավոր և անդեմ ձևերը, *որոշի* լծորդությունը և *կիրառի* խոսքում ուղիղ և փոխաբերական իմաստներով: 2. *Տարբերակի* բայածանցները, պարզ և

հմտություններ, ժամանակը ճիշտ պատկերացնելու և համապատասխան բայաձևերով արտահայտելու հմտություններ 2. Զարգացնել հաղորդակցական հմտությունները:	խոնարհումը (դրական և ժխտական) 4. Բայի անդեմ ձևեր՝ անկախ դերբայներ և ձևաբայեր (կախյալ դերբայներ), կազմությունը 2-րդ հատված 5. Ածանցավոր բայերի տեսակները (սոսկածանցավոր, պատճառական, բազմապատկական, կրավորական) 6. Բայի սեռը (ներգործական, կրավորական, չեզոք) 7. Անկանոն և պակասավոր բայեր		ածանցավոր բայերը, ճիշտ կիրառի խոսքում: 3. Տեքստում *գտնի* տարբեր եղանակաձևերը, դրանք *ճիշտ կիրառի* խոսքում: 4. *Համեմատի* տարբեր կազմության բայերն իրար հետ՝ նշելով ընդհանրություններն ու տարբերությունները: 5. Անդեմ և դիմավոր բայերը *ճիշտ կիրառի* խոսքում: 2-րդ հատված 6. Տարբեր ոճի տեքստերում *գտնի* անդեմ և դիմավոր բայերը: 7. *Խոնարհի* դիմավոր բայերը, *որոշի* դեմքը, թիվը, ժամանակը և *կիրառի* խոսքում: 8. Անկանոն և պակասավոր բայերը ճիշտ *կիրառի* խոսքում:
Թեմատիկ գրավոր աշխատանք		**6**	
Գործնական աշխատանք		**2**	
Կիսամյակային գրավոր աշխատանք		**2**	
Նախագծային աշխատանք		**1**	
Անցածի կրկնություն		**3**	

ԻՆՉՊԵՍ ՊԼԱՆԱՎՈՐԵԼ ԴԱՍԸ

Այն, ինչ կարելի է սովորել մեծահասակի կամ հասակակցի օգնությամբ, մի քանի անգամ գերազանցում է մենակ սովորելու հնարավորությունները։

Ուսուցչի ստեղծագործական որակներից մեկը դրսևորվում է դասի ճիշտ պլանավորման մեջ։

Ընդհանրապես, յուրաքանչյուր դասի պլանավորման առաջին քայլն սկսվում է դասից առաջ՝ դասին հանգամանորեն նախապատրաստվելիս.

• ընտրվում է ուսուցանվող նյութի ծավալը,

• կատարվում է դասանյութի համակողմանի վերլուծություն,

• առանձնացվում են հիմնական գաղափարներն ու հասկացությունները, արժևորվում նյութի կարևորությունը,

• ուսուցիչն իր համար հստակեցնում է նպատակներն ու խնդիրները, փորձում է որոշել այն հմտությունները, աժեքները, որոնք նա ակնկալում է ստանալ ուսուցման արդյունքում։

Ըստ դասի փուլերի՝ որոշվում են ուսուցչի և աշակերտների գործողությունների տեսակները, ընտրվում է ինքնուրույն աշխատանքի և վարժությունների համակարգը։

Բացի բովանդակային արժեքներից, ուսուցիչը հստակեցնում է նաև, թե տրամաբանական մտածողության ինչ հնարավորություններ է տալիս նյութը կամ ինչ նախնական գիտելիքներ ունի աշակերտը տվյալ թեմայից, ինչպես է օրվա նյութը կապվում աշակերտի՝ արդեն ունեցած գիտելիքների հետ և ինչպես է նպաստելու հետագա գիտելիքներ ստանալուն։

Դասի նպատակները պետք է պարզ լինեն ինչպես ուսուցիչներին, այնպես էլ սովորողներին, իսկ ակադեմիական նպատակները պետք է համապատասխանեն բոլոր սովորողների կարողություններին։

Դասի պլանը ակնկալվող արդյունք կտա, եթե նրա նպատակները հստակ են և իրատեսական, եթե սովորողը տրամադրված է մասնակցելու իր իսկ ուսումնառությանը, եթե համագործակցորեն են աշխատում խմբերը, եթե վարժություններն ու առաջադրանքները, ուսումնական այլ նյութերը նպաստում են թեմայի գիտակցական յուրացմանն ու նպատակի իրագործմանը։ Դասի արդյունավետությունը մեծապես կախված է նաև թեմայի ուսուցման նպատակին համապատասխան մեթոդի և մեթոդական հնարների ճիշտ ընտրությունից։ Մեթոդը ուսուցչի և ասովորողների փոխկապակցված գործողությունների համակարգն է, որն էլ ապահովում է ուսուցանվող նյութի յուրացումը.

• Դասի պլանավորման նախապատրաստական փուլի կարևոր մասերից է նաև ժամաբաշխումը՝ առաջադրանքների, վարժությունների և այլ գործողությունների միջև։

Ուսումնական ուղեկցող նյութերը, որոնք սովորողներին կօգնեն ավելի արագ և խոր յուրացման համար, նույնպես պիտի նախապես կազմվեն։ Այդ լրացուցիչ նյութերը, ծրագրին համապատասխան աշխատանքային գիրք–տետրերը պետք է հասանելի լինեն սովորողների համար։

• Ժամանակակից դասի պլանավորման կևևոր քայլերից է մուտքի նախապատրաստումը, որ այսօր անվանում ենք խթանում։ Այս փուլում աշակերտներն ի մի են բերում իրենց նախնական գիտելիքները, և նոր անծանոթ նյութը սովորելու շարժառիթներ են ստեղծվում։ Դասը պլանավորելիս պետք է ձևակերպել այն հարցադրումը, որը խթանելու և ապահովելու է սովորողների ակտիվ ներգրավումը դասին։ Այս փուլի շատ գործածական մեթոդներից է մտագրոհը, որը գաղափարների ստեղծման և հարստացման եղանակներից մեկն է։ Մինչև բուն նյութի ուսուցմանն անցնելը ուսուցիչը նպատակային հարցադրումով կազմել է տալիս նյութի հետ առնչվող նախնական գիտելիքների

վերաբերյալ տեղեկատվություն: Հարցերն այնպիսիք են լինելու, որոնց պատասխանները «թաքնված» են ներկայացվելիք նյութի մեջ:

(Օրինակ՝«Գոյական» թեմայի ուսուցումն սկսելուց առաջ կարելի է զրույց վարել. «Առավոտյան դպրոց գալու ճանապարհին ինչեր տեսաք և ո՞ւմ հանդիպեցիք» հարցի շուրջ):

Ի՞նչ պետք է տեսնեք դասարանում, երբ նախապես լիարժեք պլանավորել եք դասը:

Քայլելով դասարանում՝ դուք կտեսնեք՝

• Սովորողներին, որոնք ակտիվորեն ներգրավված են աշխատանքի մեջ:
• Նրանք պրովոկացիոն/հրահրող հարցեր են տալիս ոչ միայն Ձեզ, այլ նաև իրար:
• Յուրաքանչյուրը կլանված է ուսումնական գործունեության մեջ, որը կարող է տարբերվել նախորդից և հաջորդից, բայց բոլորը կապված են նույն թեմայի հետ և կազմում են նույն գործընթացի մասերը:
• Ուսուցման գործընթացը կառուցված է փորձի, բազմաբնույթ գործունեության, առաջադրանքների, խաղերի, ստեղծագործելու և այլնի միջոցով:
• Բացահայտումներն ուրախությամբ են ընդունվում և արձանագրվում են:
• Սովորողները աշխատում են ինքնուրույն, փոքր խմբերով կամ ամբողջ դասարանով:
• Յուրաքանչյուր ուսանող գիտի, թե ինչ է անում և ինչու:
• Դասարանի պատերին կան տեղեկություններ և հարցեր, որոնք վերաբերում են ընթացիկ թեմային:
• Բացի այդ, կան տարբեր, այդ թվում՝ լրացուցիչ աղբյուրներից տեղեկություններ, ապացույցներ՝ կապված հարցերի և հարցումների հետ:
• Հարցերը բաց են և ուղղված գլոբալ մտածողության խթանմանը, որոնք պտտվում են խաչվող հասկացությունների շուրջ, բայց տորհված են սովորողների ընկալման համար:
• Նյութերը բազմազան են և տեսանելի:

Ո՞րն է Ձեր՝ուսուցչի դերը: Դուք՝որպես ուսուցիչ՝

• Ավելի շատ դասասենյակի վարողն եք: Այո՛, իհարկե, Դուք երբեմն ուղղակիորեն դասավանդում եք, բովանդակություն եք հաղորդում, բայց դա ավելի շատ արվում է վարքագծի և հմտությունների մոդելավորման ձևով:
• Ամենից հաճախ ուղղորդում եք սովորողներին իրենց հետազոտություններն իրականացնելիս՝ նպատակ ունենալով, որ սովորողները անկախ վերահսկողություն ունենան իրենց ուսումնառության ընթացքում:
• Ներկայացնում եք պրովոկացիոն/խնդրային իրավիճակներ, որոնք խթանում են սովորողների ուշադրությունն ու մտածողությունը, մղում սովորելու և, ի վերջո, գործողությունների:
• Օգնում եք սովորողներին եզրակացություններ անելու և ընկալելու հասկացությունները:
• Խրախուսում եք քննարկումներն ու խթանում հետաքրքրասիրությունը բաց երկխոսության միջոցով և անհրաժեշտության դեպքում՝ ներկայացնում եք առաջարկներ:
• Ուղղորդում եք սովորողներին ուսուցման ողջ գործընթացում՝ հավաքելով տվյալներ այն մասին, թե ինչ գիտեն և ինչ են սովորել մինչ այժմ, որպեսզի ավելի լավ հետադարձ կապ տաք իրենց ուսումնառության և Ձեր դասավանդման ընթացքի մասին:

Ինչպե՞ս պետք է իրականացնեք արդյունավետ պլանավորում:

- Դուք համոզված եք, որ ուսուցման գործընթացի միայնակ պլանավորումը արդյունավետ չէ. համագործակցությունը անհրաժեշտ պայման է:
- Դուք պարբերաբար հանդիպում եք դպրոցական համայնքի այլ անդամների (մասնախմբի ուսուցիչների, տվյալ դասարանում դասավանդող այլ ուսուցիչների, մասնագետների, օժանդակ անձնակազմի և տնօրենության հետ)՝ քննարկելու դասավանդման փորձի, գնահատման, սովորողների նախկին, ներկա և հետագա ցանկալի արդյունքներին վերաբերող և այլ կարևոր հարցեր:
- Հաճախ մասնակցություն եք ունենում տվյալ դասարանի այլ դասերին՝ դիտարկելու համատեղ պլանավորման արդյունքը՝ համակցված այլ առարկաների բովանդակությանը:
- Գրում եք Ձեր մտքերը, դիտարկումներն ու առաջարկները՝ շարունակաբար բարելավելու ուսուցման և սովորողների ուսումնառության գործընթացը:
- Դուք գիտեք, որ պլանավորումը պարզապես սկիզբ, ընթացք և ավարտ չէ. այն շարունակական ընթացք է, որը մշտապես վերանայվում է սովորողների և ուսուցիչների աշխատանքի ընթացքում:

Ինչպե՞ս է ձևավորվում կարողունակահեն մտածողությունը ձեր դասարանում:

- Դասավանդվող բովանդակությունը և հմտությունները ձևավորվում են քննադատական մտածողության և անձնական փորձի ու գործողությունների հիման վրա:
- Ուշադրության կենտրոնում են կրթության բովանդակության բոլոր բաղադրիչները՝ գիտելիքը, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքները:
- Կարևորվում է մտածող, հավասարակշռված, գիտակ, հոգատար, սկզբունքային, հաղորդակցվող, նորի համար բաց անհատների ձևավորումը:
- Շեշտադրվում են բաց քննարկումները, տարբեր մշակույթների ուսումնասիրման և համեմատության ուղղությամբ աշխատանքները, սովորողների մեջ արժեքների ձևավորման հեռանկարների, հանդուրժողականության ու հարգանքի վերաբերյալ զրույցները:
- Մայրենի լեզվի փորձառությունը առանցքային դեր ունի սովորողի համակողմանի զարգացման գործում:
- Ամենակարևորը սովորողներին գործողությունների մղելն է՝ որպես վերաբերմունքի դրսևորման վարքագծային ապացույցների, երբ սովորողները ոչ միայն մտածում ու պլանավորում է լուծումներ, այլև տեսնում են դրանք գործողության մեջ: Տարիների ընթացքում սովորողները, նմանատիպ գաղափարների և տարբեր տեսակետների քննարկման մեջ լինելով, կարող են զարգացնել ողջ կյանքում սովորելու համար անհրաժեշտ հմտություններ և վերաբերմունք:
- Վերջապես, Ձեր դասարանում ոչ միայն հանդուրժում եք, այլև խրախուսում եք տարբերությունները՝ կիրառելով տարբերակված ուսուցմանը նպաստող մեթոդներ:

ՄԵԹՈԴԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործում նրա ակտիվ մասնակցությունը: Ուսումնական ակտիվ միջավայր ապահովող մեթոդները ընդունված է անվանել փոխներգործուն մեթոդներ: Դրանց հիմքում ընկած է կատարողական սկզբունքը: Այս մեթոդները նպաստում են ստեղծագործական, քննադատական մտածողության զարգացմանը և՛ անհատական, և՛ խմբային աշխատանք կատարելու կարողությունների ձևավորմանը, մի շարք կարողությունների (համագործակցային, սոցիալական փոխազդեցության, հաղորդակցական) զարգացմանը: Մյուս կողմից՝ աշակերտը հնարավորություն է ստանում ամփոփել, ակտիվացնել ու կիրառել սովորածը:

Բազմաթիվ մեթոդներ կիրառելիս ուսուցիչը պետք է վստահ լինի մեթոդի արդյունավետության մեջ: Սովորողը նույնպես դժվարություն ունի հարմարվելու ակտիվ ուսուցման, ինքնակրթության մեթոդներին. ուստի ուսուցչի խնդիրն է նրան հասկանալի դարձնել, թե ինչ է անելու և ինչու: Աշակերտը տեղյակ պիտի լինի, թե ինչ են ակնկալում իրենից, վստահ լինի, որ ուսուցիչն իրեն աջակցելու է, օգնելու է և առաջնորդելու:

Պարզ է, որ բազմաթիվ մեթոդների իմացությունը անհրաժեշտ է, բայց բավարար չէ դրանք հմտորեն կիրառելու, ակնկալիքներն արդարացնելու, նորարարությունն ապահովելու և բարեփոխումները իրականացնելու: Ծանր ու լուրջ պատասխանատվություն ունի ուսուցիչը: Ի՞նչ սովորեցնել, ինչո՞ւ և ինչպե՞ս սովորեցնել հարցերը կազմում են ուսուցման գործընթացի միջուկը, որտեղ մեթոդն ունի կապող օղակի բարդ և առանձահատուկ դեր:

Վերջին հաշվով, ուսուցչի նպատակն է, որ աշակերտները հաղթահարեն կախվածությունը ուսուցչից և դառնան առավել ինքնուրույն:

Ակտիվ մեթոդներով դասավանդելու հնարավորության առավելությունը նախ այն է, որ բոլոր աշակերտներն ընդգրկվում են առաջադրանքների կատարմանը և համագործակցային խմբերով աշխատելու շնորհիվ խմբի յուրաքանչյուր անդամ ունենում է իր հավասար մասնակցությունն ու պատասխանատվությունը խմբի և իր սեփական հաջողության համար: Այս ակնկալիքները դրդում են աշակերտներին բարձր նվաճումների, իսկ ցածր սպասելիքները տանում են դեպի անտարբերություն, անվստահություն և ջանքերի բացակայություն: Բարձր նվաճումների հասնելու նպատակները կարող են որոշվել և՛ ուսուցչի կողմից, և՛ ամբողջ խմբով համատեղ: Ուսուցման աշակերտակենտրոն բնույթն էլ ապահովում է բարձր նվաճումների հասնելը:

Չպիտի մոռանալ, որ ուսուցումը կամավոր գործընթաց է. ամեն ոք ինքը պետք է սովորի այն, ինչ ցանկանում է: Ուսման նկատմամբ ունեցած վերաբերմունքով էլ որոշվում է ձեռքբերումների մակարդակը: Այստեղ է, որ ուսուցիչն օգնելու է աշակերտներին՝ գիտակցելու ինքնուրույն ուսումնառության անհրաժեշտությունը և ուսման նկատմամբ դրական ու նախաձեռնողական վերաբերմունքի ձևավորման կարևորությունը:

Ավանդական դասի պլանավորումը ստանդարտ կառուցվածք ուներ, որտեղ ուսուցիչը միակ առաջնորդն ու ղեկավարն էր և միակ գնահատողը: Մինչդեռ համագործակցային ուսուցման դեպքում խմբի անդամներն աջակցում են մեկը մյուսին հաջողության հասնելու համար և իրենք են քննարկում իրենց աշխատանքի որակը, համատեղ աշխատանքի արդյունավետությունը, և բոլորն են մասնակցում գնահատմանը:

Այսօր կիրառվող գնահատման բազմաթիվ ձևերից օգտվելու, մեթոդներ օգտագործելու և ընտրություն կատարելու խնդիր ունի ուսուցիչը: Նա հստակ պիտի պատկերացնի, թե աշխատանքի որ բովանդակության և որ տեսակի համար գնահատման ինչ ձև պիտի ընտրի:

Առանձին թեմաների ուսուցման նմուշօրինակներում ցուցումներ կտրվեն գնահատման բարդ գործընթացի, արդյունավետ խմբաբաժանման, ուսուցչի դերերի և այլ կարևոր հարցերի մասին:

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Ձևաբանության ուսուցման դպրոցական դասընթացի ծրագիրը զգալիորեն ծավալուն է, քանի որ այն նախատեսված է միայն 7–րդ դասարանի համար՝ նախկին երկու տարվա փոխարեն: Դրան համապատասխան՝ զգալիորեն բեռնաթափվել է ծրագիրը համեմատաբար պակաս գործնական արժեք ունեցող նյութերից՝ դրանով սովորողին ու ուսուցչին ազատելով ձևաբանական գիտելիքների ուսուցման ավելորդ ձգձգվածությունից. մի բան, որ ձանձրացնում ու հոգնեցնում էր սովորողին:

Սակայն որքան էլ անթերի լինեն ծրագիրն ու դասագիրքը, բոլոր դեպքերում ուսուցման մեջ վճռորոշը ուսուցչի դերն է: Հասարակության զարգացման բոլոր փուլերում էլ ուսուցիչը մշտապես սովորելու և ժամանակի պահանջներին համապատասխան կատարելագործվելու խնդիր է ունեցել: Սովորեցնելու համար պետք է սովորել. այս սկզբունքով աշխատող ուսուցիչը պետք է ունենա ճանաչողական գրագիտություն ուսումնական նյութերի պլանավորման և դասավանդման ժամանակակից մեթոդների իմացություն, ինչպես նաև մասնագիտական փորձառությանը հետադարձ հայացք գցելու և վերլուծելու կարողություն ու հմտություն:

Ուսուցչի դերին անդրադառնալու անհրաժեշտությունը բխում է որակյալ դասավանդում իրականացնելու պահանջից: Նորարարական մեթոդների ներդրման շնորհիվ ձևաբանության ուսուցումն ավելի հետաքրքիր կդարձնի ուսուցիչը:

Ուսումնառության տարիներին սովորած քերականական գիտելիքները պետք է նպաստեն սովորողի լեզվի մաքրությանը, հենց դրան էլ օգնելու են և՛ գրավոր, և՛ մանավանդ բանավոր վարժությունները: Որքան հնարավոր է, աշակերտի համար պետք է շատ խոսելու առիթներ ու հնարավորություններ ստեղծել, բանավոր խոսքի թերությունները ժամանակին ուղղել, խոսքը հղկել, կատարելագործել:

Անընդհատ սովորելու անհրաժեշտությունը գիտակցող, ժամանակակից մեթոդներով զինված, սովորողների ճանաչողական ու հոգևոր զարգացումը խթանելու և ուսումնառությանը աջակցելու հմտություններով օժտված ուսուցիչն է ձևավորելու գիտելիքների, կարողությունների, արժեքների և վերաբերմունքի այն համակարգը, որ հասարակությունն ակնկալում է հանրակրթությունից:

Սույն ուղեցույցում ներկայացված առանձին թեմաների ուսուցման դասի օրինակները կօգնեն ուսուցչին սովորողների հետ աշխատանքը համագործակցային հիմքերի վրա դնելու առումով: Ուսուցման ընթացքը արդյունավետ է, եթե սովորողը ինքը ակտիվորեն մասնակցում է իր ուսումնառության գործընթացին, ինքն է իր գիտելիքները «հայտնագործում» և յուրացնում, ինքն է աշխատում իր գիտելիքները ինքնուրույնաբար համալրել ու դրանց ձեռքբերման նպատա-կով նախաձեռնություն դրսևորել:

Նպատակ ենք ունեցել հնարավորին չափ հստակ ներկայացնել նոր մոտեցումներով, ակտիվ մեթոդներով անցկացվող քերականության ուսուցման նմուշօրինակներ, որոնք, կարծում ենք, հետաքրքրությամբ կընդունվեն ուսուցիչների կողմից և ժամանակակից մեթոդներով մայրենի լեզվի ու գրականության դասավանդման սկիզբը կդնեն:

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ

Մեր լեզվի բառապաշարի մեջ մտնում են բազմապիսի և ամենաբազմաբնույթ բառեր։ Այդ բազմապիսի բառերն իրենց բառային իմաստներից բացի (որոնցով տարբերվում են միմյանցից), ունեն մի այլ՝ ընդհանուր հատկանիշ, որով կամ նմանվում են, կամ տարբերվում իրարից։ Այդ ընդհանուր հատկանիշների հիման վրա լեզվի բոլոր բառերը խմբավորվում են առանձին խմբերի՝ խոսքի մասերի մեջ։

Խոսքի մասերի հատկանիշների ուսումնասիրությամբ էլ զբաղվում է «Ձևաբանություն» բաժինը։

Ձևաբանության ուսուցումն սկսվում է 7-րդ դասարանում, որտեղ ծրագիրն ընդգրկում է նյութական իմաստ ունեցող խոսքի մասերը՝ գոյական, ածական, թվական, դերանունը, բայ։

Կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ, ձևեր։ Հանդիսանալով ուսուցման գործընթացի միջուկը՝ մեթոդը իրար է կապում ուսուցման՝ նախապես պլանավորված նպատակը և վերջնական արդյունքը։

Այսպիսով, ուսուցման գործընթացում մեթոդն ունի կապող օղակի բարդ և առանձնահատուկ դեր։

Ամեն դասից առաջ ուսուցիչը լուծելու է մի շարք խնդիրներ՝ ինչպես պլանավորել, իրականացնել, կանխատեսել արդյունքները, հասնել նպատակներին։

Այս խնդիրները իրականացնելու համար ուսուցչին անհրաժեշտ է ուսուցման բազմազան մեթոդների լավ իմացություն։

Խմբային առաջադրանքներ կատարելիս աշակերտներն անցնում են այնպիսի իրավիճակներով, որոնք պահանջում են բարդ փոխհարաբերություններ և սոցիալական հմտություններ։ Հաճախ այդ հմտություններին (միջանձնային փոխհարաբերություններում վստահություն, ղեկավարման կարողություն, որոշումներ կայացնելու հմտություն և այլն) չտիրապետելու պատճառով խմբային աշխատանքը ձախողվում է։ Միմյանց լսելու, խրախուսելու, համատեղ աշխատանքը պլանավորելու և իրականացնելու վարժությունները նպաստում են համապատասխան հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը։

Դասի պլանի նմուշօրինակներ

Դասի թեման՝ Խոսքի մասեր

Ուսուցչի անունը՝ _____
Ամիս–ամսաթիվ՝ _____
Առարկան՝ Հայոց լեզու
Դասարանը՝ 7-րդ դասարան
Դասի տևողությունը՝ 1 դասաժամ
Դասի տեսակը՝ Հաղորդման դաս

Նպատակները՝
Ձևավորել համակարգային մտածողություն, դասակարգելու, տարբերակելու կարողություն։
Վերջնարդյունքները՝
Սովորողը

ա. տարբերակի բառերը ըստ ընդհանուր հատկանիշների,
գ. դասակարգի բառերն ըստ գործածության հաճախականության, ըստ հարցերի։
Միջառարկայական կապ՝ Կապեր ստեղծել մաթեմատիկայի հետ։
Խաչվող հասկացություն՝ օրինաչափություն
Ուսումնական նյութեր՝ դասագիրք, տետր, սահիկաշար, առաջադրանքներ
Օգտագործվող մեթոդներ և հնարներ՝ «Մտագրոհ», «խմբավորում», «Հարցուպատասխան», «Խաղ», «Զրույց»։
Ընթացքը՝
1. Պարզել, թե ինչ գիտեն աշակերտները ուսուցանվող թեմայի (խոսքի մասերի) վերաբերյալ։ Ծանոթ թեմայի ընտրությունը կարող է կամուրջ ծառայել նոր թեման լավ յուրացնելու, ունեցած նախագիտելիքները խորացնելու և հարստացնելու համար։
2. Կիրառել «Մտագրոհ»-ի մեթոդը. (5 րոպե)։
Հարց ա. – Ի՞նչ գիտեք խոսքի մասերի, նրանց իմաստների և տեսակների վերաբերյալ։
Աշակերտներն ակտիվացնում են իրենց հիշողությունը, թարմացնում իմացածը և նոր նյութի յուրացումը ապահովում։ Թվարկում են խոսքի մասերի անունները (ըստ երևույթին խառը հերթականությամբ), մեկը գրատախտակին արագ գրում է։
Հարց բ. Թվարկե՛ք տարբեր խոսքի մասերի պատկանող բառեր։ Դրանք նույնպես խառը գրվում են գրատախտակին։
1. Ուսուցիչն առաջարկում է խմբավորել բառերը (ըստ նմանության, ըստ ընդհանուր իմաստի) և վերադասավորել նաև խոսքի մասերը՝ ըստ կիրառության հերթականության։
Հարց գ. Ի՞նչ սկզբունքով կամ օրինաչափությամբ խմբավորեցիք բառերը։
4. Կարճ դասախոսություն – զրույց (5 րոպե)։
5. Խմբային աշխատանք։ (10 րոպե)։
Արագ խմբեր են ձևավորում (խմբի անդամներն ընտրում են աշակետները) և հանձնարարվում է դասագրքի «Խոսքի մասեր» թեմային կից առաջադրանք 1-ը։
1. Հետևյալ բառերը դասակարգի՛ր աղյուսակ 1-ի համապատասխան սյունակներում։

2. Խմբով քննարկե՛ք՝ որ խոսքի մասերն են ավելի շատ կիրառվում խոսքում և դրանք ներկայացրե՛ք դիագրամի տեսքով։

կարծր, հեռու, մշտապես, ընկերություն, շնորհիվ, իրոք, տրորել, քամի, միգուցե, այստեղ, իսկ, մասին, վո՛ւյ, կարծես, կապույտ, դա, հե՛յ, բաժանում, բաժանել, հավասար, հավասարություն, ի դեպ, հավասարում, հոգեպես,

Աղյուսակ 1

Գոյական	Ածական	Թվական	Դերանուն	Բայ	Մակբայ	Կապ	Շաղկապ	Վերաբերական	Ձայնարկություն

Աշխատանքն ավարտելուց հետո խմբերը կներկայացնեն իրենց աշխատանքները։ Անհրաժեշտության դեպքում կկատարեն ուղղումներ։ (7 րոպե)

Թեման ամրապնդելու համար առաջարկում ենք «Այբուբեն»-ի խաղ։ (10 րոպե)։

Խմբերը կանգնում են շրջանաձև, խմբի անդամները՝ շարքով՝ իրար հետևից։ Շարքերի առջևում կանգնած սովորողներին նշագրիչներ տալ՝ գրատախտակին կամ պաստառին գրելու համար։ Շարքի հետևում կանգնած սովորողի մեջքին մատով երևակայական տառ գրե՛ք։ Յուրաքանչյուր սովորող իր դիմացինի մեջքին նույն տառն է գրում։ Շարքի առջևում կանգնած սովորողները պետք է արագ վազեն և գրատախտակին գրեն այդ տառով սկսվող որևէ խոսքի մաս՝ ուսուցչի ցուցումով։ Հաղթում է այն խումբը, որը արագ կգրի 5 բառ։

Խաղի ավարտին կարելի է հաղթող խմբին պարգևատրել։

Գնահատում՝ - կատարել փոխադարձ գնահատում։ (3 րոպե)։

Տնային հանձնարարություն (3 րոպե)։

Կազմել կապակցված խոսք՝ կիրառելով տարբեր խոսքի մասեր։

Անդրադարձ (2 րոպե)։

Ի՞նչ սովորեց և ի՞նչպես սովորեց։

Ի՞նչը լավ ստացվեց մեզ մոտ։

Ո՞ր հարցին կցանկանայիք անդրադառնալ հաջորդ դասին։

Նկարագրված դասապլանի մեջ գործածվեց մտագրոհ մեթոդը։ Սա խմբային աշխատանքի շատ արդյունավետ մեթոդներից է։ Հիմնական նպատակը ուսուցանվող նյութի հետ առնչվող բառեր ու գաղափարներ հայտնաբերելն է։ Խթանում է թեմայի մասին սովորողների ունեցած նախկին գիտելիքների բացահայտումը՝ նրանց ուշադրությունը սևեռելով նոր նյութի ուսուցմանը։

Ուսուցիչը դասն սկսում է որևէ հարց տալով կամ «բանալի» բառով, որի շուրջ էլ սովորողները բառեր ու գաղափարներ են արտահայտում։ Այդ հուշող բառը գրվում է ցուցապաստառին (կամ գրատախտակին), և սկսվում է մտքերի տարափը։

Պետք է քաջալերել թվարկված բառերի կամ գաղափարների մասին հարցեր տալը։

Խումբը համատեղ աշխատանքով կարող է ավելի շատ մտքեր ծնել, քան նույն պայմաններում անհատական աշխատանք կատարելով։

Մտքերի հոսքը չի կարելի արգելակել՝ արտահայտված գաղափարներին գնահատականներ տալով։ Ստեղծագործական մտածողության զարգացման համար նպաստավոր պայմաններ են առաջանում այն դեպքում, երբ գնահատումն իրականացվում է մտքերի արտահայտումն ավարտելուց հետո։

Այս մեթոդով աշխատելիս պետք է կիրառել հետևյալ կանոնները.

1. ցանկացած քննադատության բացակայություն,
2. գաղափարների խրախուսում,
3. աշակերտների հավասարություն,

4. զուգորդումների (ասոցիացիաների) ազատություն,

5. բոլոր մտքերի գրառում։

Մեթոդը հեշտ է ընկալվում սովորողների կողմից, կարելի է կիրառել ցանկացած դասարանում, ցանկացած թեմայի ուսուցման ժամանակ։

Այն հիմնականում դասի խթանման փուլի մաս է, կարելի է կիրառել նաև դասի մյուս փուլերում, երբ անհրաժեշտ են մտքեր, գաղափարներ ստեղծել ու հիմնավորել։

«Գոյական անուն» թեմայի ուսուցումը

Նպատակահարմար է գոյականի ուսուցումը կազմակերպել համագործակցային ուսուցման եղանակով։ Դա հնարավորություն կտա գոյականի խոսքիմաստային մի քանի հատկանիշներ ուսուցանել միաժամանակ, նույն դասի ընթացքում։ Այս ձևով տեսական բացատրություններին կարելի է հատկացնել նվազագույն ժամանակ, փոխարենը նյութը սովորեցնել սովորողների միջոցով՝ նրանց գործնական, կատարողական վարժությունների լուծումների մղելով։ Որպես ուսումնական նյութ՝ դասագիրքը բավականաչափ վարժություններ ունի։

Նույն միջոցով կարելի է անցկացնել նաև գոյականի հոլովները։ Ամեն հոլովի ուսուցմանը առանձին ժամ հատկացնելու փոխարեն (ինչպես ավանդաբար եղել է) բոլոր հոլովների և՛ կազմությունը, և՛ նախադասության մեջ նրա գործածությունը կարելի է սկսել միաժամանակ։ Այդպես սովորողները միասնական ձևի մեջ կտեսնեն «հոլովում» հասկացությունը և ավելի հեշտ կընկալեն։ Ապա միայն գործնական վարժություններով հաջորդաբար նախադասությունների (հետո նաև խոսքի) մեջ կհոլովեն տարբեր գոյականներ, կծանոթանան տարբեր հոլովների ինչպես կազմությանը, այնպես էլ հոլովական իմաստներին։ Խոսքի մեջ գործածելիս կուսումնասիրեն հոլովների նմանություններն ու տարբերությունները, իմաստային յուրահատկությունները։ Քերականական մասնակի վերլուծություններ կկատարեն, կկազմեն հնգյակներ և հասկացությունների քարտեզ, որոնք կնպաստեն նյութի գլխավոր էական հատկանիշները սեղմ արտահայտելուն, տրամաբանական խնդիրներ լուծելուն։ Ուրեմն առաջադրանքներն ու վարժությունները պիտի համապատասխանեն դասին և սովորողների ընկալման մակարդակին։ Այս մեթոդով պարապելուց հետո յուրացման մակարդակը ցույց կտա, թե որքանով են ուսուցչի ակնկալիքներն իրատեսական։

Հոլովների ուսուցման վարժությունները, որ տրված են դասագրքում, կարելի է լրացնել կա՛մ ուսուցչի կազմած այլ առաջադանքներով, կա՛մ աշխատանքային տետրում նշված նպատակային վարժություններով։

Դասի նմուշօրինակ
Գոյական անուն

Գիտելիքը ձեռք է բերվում, երբ աշակերտին սովորեցնում են գաղափարներ, որոնք հնարավոր է ճշտել, ինչպես նաև հմտություններ, որոնք նրանց հնարավորություն են տալիս ճանաչել իրենց հանդիպող առարկաները։

Արիստոտել

Ուսուցչի անունը՝ _____
Ամիս–ամսաթիվ՝ _____
Առարկան՝ _____
Դասարանը՝ 7-րդ դասարան
Դասի տևողությունը՝ 1 դասաժամ
Դասին տեսակը՝ Նոր նյութի հաղորդման դաս
Դասի թեման՝ Գոյականը որպես խոսքի մաս
Նպատակները՝
1. Ներկայացնել գոյականի խոսքիմասային հատկանիշների։
2. Խորացնել և ընդլայնել կրտսեր դպրոցում անցած գիտելիքները գոյականի մասին։
3. Զևավորել լեզվաքերականական գիտելիքները խոսքում կիրառելու կարողություն։
4. Մշակել ինքնուրույն ուսումնառության հմտություններ։

Վերջնարդյունքը
Սովորողը՝

. Դասակարգի անձնանիշ և ոչ անձնանիշ գոյականները։
. Տարբերակի պարզ, ածանցավոր, բարդ, բարդածանցավոր գոյականները։
. Կազմի նախադասություններ անձնանիշ և իրանիշ գոյականներով։
. Կիրառի գոյականները բանավոր և գրավոր խոսքում։

Միջառարկայական կապ՝ կապեր ստեղծել պատմության, մաթեմատիկայի, աշխարհագրության առարկաների հետ։ Նշված առարկաների դասագրքերից առանձնացնի գոյականներ։

Խաչվող հասկացություններ՝ Օրինաչափություն։ Նշել օրինարափությունները, որոնցով դասակարգվում են գոյականները ըստ կազմության։

Ուսումնական նյութեր՝ Դասագիրք, տետր, առաջադրանքներ, սահիկաշար

Օգտագործվող հիմնական մեթոդը՝ Երկթև աղյուսակ, խմբային աշխատանք, ԽԻԿ համակարգ

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Կազմակերպչական մաս (3րոպե)

Դասարանը գունավոր թերթիկների միջոցով բաժանել խմբերի։

Խթանման փուլ (5 րոպե)

Գրատախտակին ամրացված է պաստառ՝ հետևյալ աղյուսակով.

Զկնորս, Կարեն, բանաստեղծ, բժշկուհի, դեղագործ, տնտեսվար	Հայրենիք, երջանկություն, քամի, հող, գիրք, արևմուտք, Մեծ Հայք

Աշակերտների ուշադրությունը հրավիրվում է պաստառին և հանձնարարվում ուշադիր դիտել և գտնել շարքերի միջև եղած նմանություններն ու տարբերությունները։ Սկզբում մտածում են

անհատապես, հետո՝ քննարկում խմբով: Խմբերը ներկայացնում են իրենց պատասխանները, քննարկում:

Հարց – Ի՞նչ օրինաչափությամբ նշեցի՛ք տարբերությունները և նմանությունները:

Իմաստի ընկալման փուլ (10 րոպե)

Աշակերտների օգնությամբ ձևակերպում ենք, թե ինչ կարող են ցույց տալ գոյականները, որոնք են անձնանիշ և ոչ անձնանիշ գոյականները, ինչ հարցերի են պատասխանում: Որից հետո հանձնարարվում է կռահել, թե աղյուսակի շարքերի վերնամասում ինչ պիտի գրվեր, որ չի գրվել (անձնանիշ, ոչ անձնանիշ), ինչը լրացվում է:

Ուսուցիչը ամփոփում է սովորողների քննարկումները և մտքերը «Գոյական անուն» թեմային վերաբերող սահիկաշարով: Սովորողների ուշադրությունը կենտրոնացնում է գոյականների կազմության վրա՝ առաջարկելով ուսումնասիրել «Գոյական անուն» թեմայում ներկայացված փոքրիկ նյութը և կատարել դասագրքի առաջադրանքներից 4-ը և 5-ը/ 5-րդ առաջադրանքը ապահովվում է միառարկայական կապը/: Խմբերը սկսում են աշխատել, որի համար ժամանակ է տրվում:

Աշխատանքը ավարտելուց հետո խմբերը կներկայացնեն իրենց աշխատանքը և կհամեմատեն: Անհրաժեշտության դեպքում կկատարեն ուղղումներ:

Կշռադատման փուլ (15րոպե)

Կատարել խմբային աշխատանք. բոլոր խմբերին տրվում է միևնույն քարտային առաջադրանքները.

1. Դասագրքում ներկայացված Գևորգ Էմինի «Երգ գրքի մասին» ակնարկը ընթերցելիս դուրս գրել տասնհինգ գոյական՝ լրացնելով աղյուսակ 6-ը/ աղյուսակը տրված է դասագրքում/:

2. Գրվածքից դուրս գրիր մինչև 5-ական պարզ, ածանցավոր, բարդ, բարդ ածանցավոր գոյականներ: /Դասագրքում առաջադրանք 17 -ն է/

3. Կազմել նախադասություններ դուրս գրած գոյականներից հինգով:

Վերջում խմբերը կներկայացնեն իրենց աշխատանը և կհամամետեն: Անհրաժեշտության դեպքում կկատարեն ուղղումներ:

Գնահատում՝ - Կատարել ձևավորող գնահատում: (3 րոպե):

Տնային հանձնարարություն (3 րոպե):

Կատարել դասանյութին կից «Նպատակային խոսք» բաժնի առաջադրանքներից որևէ մեկը՝ հիմնավորելով ընտրությունը:

Անդրադարձ (2 րոպե):

Ի՞նչ սովորեցի և ի՞նչպես սովորեցի:

Ի՞նչը լավ ստացվեց մեզ մոտ:

Ո՞ր հարցին կցանկանայի անդրադառնալ հաջորդ դասին:

ԽԻԿ համակարգը՝ որպես մտածողությունը խթանող համալիր միջոց

ԽԻԿ (խթանում – իմաստի ընկալում – կշռադատում) համակարգը ուսուցման և ուսումնառության երեք փուլերից բաղկացած մի մոդել է: Սա ճանաչողական գործընթացին առնչվող մտածողության մի ընթացք է, ուր սովորողները պետք է ներգրավվեն դեռևս նյութը սովորելուց առաջ, սովորելու ընթացքում և սովորելուց հետո: Այս մոդելը համագործակցային մոտեցում է, որի նպատակն է դասավանդման մեջ ներմուծել քննադատական մտածողություն ձևավորող ու խթանող մեթոդներ:

Քննադատական մտածողությունը հմտություն է: Այն ենթադրում է ընկալել գաղափարները և ապա սկսել խորհել դրանց նշանակության մասին, դիտել դրանք մի փոքր թերահավատությամբ,

հիմնավորումները ամրապնդելու համար, դիտել, քննել և գալ որոշակի դիրքորոշման։ Այսինքն՝ տեղեկությունն ընկալելուց հետո վերաիմաստավորել ստեղծագործաբար։

Եռափուլ համակագի առաջին փուլը խթանման փուլն է։

Խթանման փուլը ուսումնական խնդրի առաջադրման փուլն է, դրդապատճառ է ծնում և խթան հանդիսանում առաջիկա գործողությունների համար։ Այս փուլում կատարվում են մի շարք իմացական վարժություններ։ Նախ սովորողներն ակտիվորեն փորձում են վերհիշել թեմայի մասին իրենց ունեցած ամբողջ տեղեկությունը։ Դա սովորողներին ստիպում է քննության ենթարկել սեփական գիտելիքները և խորհել բուն թեմայի մասին։ Նա գիտակցում է, որ անհրաժեշտ նյութը ինքը չգիտի, և ակտիվանում է չիմացությունը հաղթահարելու դիրքորոշումը։ Նա զգում է այն հակասությունը, որ գոյություն ունի իմացության ու չիմացության միջև։ Սա ուսումնական խնդիրն է, հիմնահարցը, և այս խնդրի լուծմանն է ուղղվելու նրա գործողությունները և սովորելու որոշակի նպատակների սահմանումը։

Սովորողներին օգնելով վերակառուցելու և հստակեցնելու ունեցած գիտելիքները՝ մենք նպաստում ենք կայուն հիմք պատրաստելուն՝ նոր գիտելիքը ընդունելու և հիմնավորապես յուրացնելու համար։

Խթանման փուլի մյուս նպատակը սովորողին շահագրգռելն ու ակտիվացնելն է. գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու գործում ինքնուրույն մոտեցում ու հետաքրքրասիրություն ձևավորելն է։

Իմաստի ընկալումը այս համակարգի երկրորդ աստիճանն է՝ բուն նյութի ընկալման փուլը։ Այստեղ ամենակարևորը խթանման փուլում ձեռք բերած ներգրավման ակտիվությունը, հետաքրքրությունն ու եռանդը պահպանել կարողանալն է։ Սովորողը հաղորդակցվում է նոր գաղափարների հետ։ Սա սովորելու այն փուլն է, երբ ուսուցիչը նվազագույն ազդեցություն ունի գործընթացի վրա։ Սովորողը պետք է կարողանա ինքնուրույն վերահսկել սեփական ընկալումը։ Երբ սովորողները վերահսկում են սեփական ընկալումը, նրանք, ըստ էության, փորձում են տեղեկությունը (նոր նյութը) հարմարեցնել իրենց մտքում արդեն հաստատված իմացական կառույցներին, նոր գիտելիքն առնչում են իրենց իմացածին։ Ուսուցիչն այս փուլում այնքան էլ ակտիվ չէ. նա հիմնականում հուշողի, կարգավորողի դերում է։

Կշռադատում – ԽԻԿ համակարգի երրորդ փուլն է, որը, սակայն, հաճախ անտեսվում է ուսուցիչների կողմից։ Սա ամփոփումն է ամբողջ դասի ընթացքում կատարված բոլոր քայլերի, գործողությունների, եզրահանգումների։ Ուսուցիչն օգնում է, որ սովորողը հանրագումարի բերի իր գիտելիքները, առանձնացնի հիմնական ու երկրորդական մտքերը, հասկացությունները, կարևորի դրանք ու դարձնի իր սեփականությունը։

Այս փուլը խիստ կարևոր է, որ սովորողը վերաիմաստավորի իր սովորածը և յուրացնի կարևորն ու անհրաժեշտը։

ԽԻԿ համակարգը ուսուցման համակարգված մոտեցման հնարավորություն է ստեղծում։ Այն նպաստում է՝

- ինքնուրույն ուսումնառությանը,
- սովորողների ստեղծագործական մտածողության զարգացմանը,
- ինքնաարտահայտման հմտության զարգացմանը,
- լսելու, խրախուսելու եզրահանգումներ անելու կարողությունների զարգացմանը։

Ածականի ուսուցման դասի նմուշօրինակ

Ուսուցչի անունը՝ _____

Ամիս–ամսաթիվ՝ _____

Առարկան ՝ _____

Դասարանը ՝ _____

Դասի տևողությունը՝ 1 դասաժամ

Դասին տեսակը՝ Հաղորդման դաս

Դասի թեման՝ Ածական անուն

Նպատակը՝

1. Խորացնել, ընդլայնել նախկին գիտելիքները ածականի մասին. ստացած գիտելիքը կիրառելու կարողություն ձևավորել, բառապաշարը հարստացնել:

2. Ձևավորել գեղագիտական ճաշակ:

3. Մտապատկերման և գեղարվեստական խոսք կազմելու կարողություններ ձևավորել:

Վերջնարդյունքներ

Սովորողը՝

. Ընդհանուր գաղափար կազմի ածականի արտահայտած ընդհանուր իմաստի, ձևաբանական առանձնահատկության մասին:

. Տարբերի ածականը այլ խոսքի մասերից:

. Կիրառի ածականը գրավոր և բանավոր խոսքում:

Միջառարկայական կապ՝ գրականություն, աշխարհագրություն

Խաչվող հասկացություն կայունություն և փոփոխություն

Ուսումնական նյութեր - դասագիրք, տետր, գրատախտակ, սահիկ

Մեթոդը՝ Մտագրոհ, ՓԳՀ-ով ընդհանուր հարց ու պատասխան. խմբային աշխատանք, **ԽԻԿ համակարգ, ճանաչողական և կիրառական առաջադրանքներ:**

Դասի ընթացքը

Խթանման փուլ: (5 րոպե)

Ուսուցիչը գրատախտակին գրում է մի քանի բառակապակցություն օր՝. գեցեցիկ տղա, հաճելի եղանակ, գրավիչ արտաքին, հյութեղ խնձոր, երփներանգ ծաղիկներ և այլն: Այնուհետև առաջարկում է ընդգծել գոյականները, ապա հարցնում է, թե որ բառերն են լրացնում այդ գոյականներին, որտեղ են գտնվում և ինչ դեր են կատարում: Սովորողները պատասխանում են՝ ըստ իրենց նախնական գիտելիքների:

Իմաստի ընկալման փուլ: (10 րոպե)

Սովորողներին հանձնարարվում է կարդալ դասագրքի նյութը և ՓԳՀ-ով գրառումներ կատարել տետրում:

Այս մեթոդն իմաստի ընկալման փուլի արդյունավետ միջոց է, որն օգնում է սովորողներին նյութը կարդալու ընթացքում վերահսկել սեփական ընկալումը: Մեթոդի էությունը այն է, որ կարդալիս արվում են գրառումներ հետևյալ փոխգործուն նշաններով.

V - գիտեմ

+ - նոր տեղեկություն է

_ - իմ իմացածին հակասում է

? - անհասկանալի է, շփոթեցնող է

I - հետքրքիր է, կարելի է քննարկել:

Ընթերցումն ավարտելուց հետո սովորողներն իրենց ստացած տեղեկատվությունը դասակարգելու նպատակով կազմում են կատարված նշումների իրենց անհատական աղյուսակը հետևյալ ձևով.

V	+	-	?	I

Աշխատանքն ավարտելուց հետո աշակերտները կարդում են իրենց գրառումները և կատարվում է քննարկում: Ուսուցիչը ամփոփում է սովորողների քննարկումները և մտքերը «Ածական անուն» թեմային վերաբերող սահիկաշարով:

Կշռադատման փուլ (20 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է 4 խմբի, խմբերին հանձնարարում է կատարել դասանյութի առաջադրանքը 1-ը:

1.Բնութագրի՛ր հետևյալ ածականներն ըստ կազմության և դասակարգի՛ր աղյուսակի վանդակներում.

արծաթե, եռագլուխ, մերկ, հայ–ռուսական, հրացանավոր, ժամկետանց, կարծր, ձեռքը թեթև, կարճլիկ, մոխրագույն, խոր, հողմացրիվ, կարմրավուն, գահավեժ, քիթը ցից, անկարեկից, կաղ

Պարզ	Ածանցավոր	Բարդ	Բարդածանցավոր	Հարադրավոր

Աշխատանքը ավարտելուց հետո խմբերը կներկայացնեն իրենց աշխատանքը՝ անհրաժեշտության դեպքում կատարելով ուղղումներ:

Համոզվելով, որ թեման յուրացրել են, ուսուցիչը կհանձնարարի հետևյալ առաջադրանքները.

- Աղյուսակից ընտրել 5 ածական և կիրառել նախադասության մեջ՝ ենթարկելով ձևաբանական փոփոխության:
- Նշել՝ ինչ փոփոխություններ է կրում ածականը գոյականաբար գործածվելիս:/ Այս հարցը կա նաև դասանյութում:
- Աշխարհագրության դասագրքից ներկայացրե՛ք ածականի կիրառության 2 օրինակ:/ Այս հարցը կա նաև դասանյութում:

Ավարտելուց հետո խմբերը կներկայացնեն աշխատանքները, կկատարվի քննարկում: Ուսուցիչը կամփոփի դասանյութը:

Գնահատումը **(5 րոպե)** - Ձևավորող գնահատման որևէ տեսակ: Սովորողները կարող են կատարել ինքնագնահատում, որի սանդղակը տրված է դասանյութի վերջում:

Տնային աշխատանք **(3 րոպե)** - Ուսուցիչը կարող է հանձնարարել դասանյութին կից առաջադրանքներից մեկը՝ սովորողների նախընտրությամբ.

- Հետազոտական աշխատանք. առաջադրանք 23:
- «Նպատակային խոսք» բաժնից առաջադրանքներ 21:

Անդրադարձ **(2 րոպե)**

Ի՞նչն էր ամենալավը խմբի աշխատանքում	
Ի՞նչպես կատարեց հանձնարարված առաջադրանքը	
Ի՞նչը կարող էին ավելի լավ անել	

«Թվական անուն» թեմայի ուսուցումը

Թվականներն էլ ածականների նման գործածվում են գոյականի հետ՝ դառնալով նրա լրացումը, մինչդեռ ածականների իմաստը թվականների համեմատությամբ միանգամայն տարբեր է։ Թվականը քանակի, թվի գաղափար է արտահայտում, իսկ ածականը՝ որակի։ Ուստի սովորողների մեջ պետք է մշակել այս ըմբռնումները և դրանց գործածության տարբերությունները։

Կրտսեր դպրոցում սովորած գիտելիքների հիմքի վրա կարելի է սահմանել թվականը՝ որպես խոսքի մաս (ինչպես տրված է դասագրքում), և ապա վարժություններով հիմնավորել սահմանումը։

Անհրաժեշտ է նշել, որ թվականի ուսուցման մեջ կարևորը նրանց ուղղագրության հարցն է։ Քանակական և դասական թվականների ուղղագրությունը կարելի է պատկերել Տ–աձև աղյուսակով և մշտապես պահել ցուցապաստառին կամ պատին։

Անջատ գրվող թվականների բաղադրիչները սովորաբար կցվում են, երբ նրանց որևէ վերջածանց է ավելանում (հինգհարյուրանոց, երեքհարյուրական)։

Պետք է ուշադրություն հրավիրել նաև հետևյալի վրա, որ մեկից մինչև ութ թվականը վերջում չունեն ը կամ ն։ Ը–ն գրվում է միայն ինը և տասը բառերի հետ։

Սխալ է՝ ութանասուն, ճիշտ է՝ ութսուն։ Երրորդ, չորրորդ բառերը գրվում են երկու ր–ով, որովհետև կազմվել են ***եր, չոր*** արմատներից և ***րորդ*** ածանցից։

Կոտորակային թվականների շարքում պետք է դասել նաև քառորդ, կես, մեկուկես, երկուսուկես, երկու երրորդ, հինգ վեցերորդական և այլն։

Թվական խոսքի մասը հիմնավորապես պետք է սովորել ճանաչողական և կիրառական վարժությունների խմբային կամ զույգերով աշխատանքի միջոցով։ Բազմաթիվ նպատակային վարժություններ կան դասագրքում։ Այդ վարժություններն ապահովում են նաև միջառարկայական կապը, ճանաչողական, նաև գեղագիտական արժեք ունեն։

Ուղղագրական հմտություններ ձևավորելուց հետո ամբողջ թեմայից աշակերտների յուրացման մակարդակը ստուգելու համար կարելի է կազմել հարցարաններ՝ աշխատանքային տետրի, դասագրքի կամ ուսուցչի կազմած առաջադրանքներով։

«Թվական անուն» թեմայի ուսուցման դասի նմուշօրինակ

Ուսուցչի անունը՝ _____

Ամիս–ամսաթիվ՝ _____

Առարկան՝ _____

Դասարանը՝ _____

Դասի տևողությունը՝ 1 դասաժամ

Դասին տեսակը՝ Հաղորդման դաս

Դասի թեման՝ Թվական անուն

Նպատակը՝

1. Խորացնել, ընդլայնել նախկին գիտելիքները թվականի մասին։
2. Ձևավորել թվականի տեսակները խոսքում ճիշտ կիրառելու կարողություն։
3. Մտապատկերման և գեղարվեստական խոսք կազմելու կարողություններ ձևավորել։

Վերջնարդյունքներ

Սովորողը՝

. Ընդհանուր գաղափար կազմի թվականի արտահայտած ընդհանուր իմաստի, ձևաբանական առանձնահատկության մասին:
. Տարբերի թվականի տեսակները
. Կիրառի թվականը գրավոր և բանավոր խոսքում:
Միջառարկայական կապ՝ մաթեմատիկա - Թվական անվան հետ կապված լեզվաբանական հասկացություններ գտի՛ր մաթեմատիկայում և մեկնաբանի՛ր ընդհանրություններն ու տարբերությունները:
Խաչվող հասկացություն- Կայունություն և փոփոխություն
Ուսումնական նյութեր - դասագիրք, տետր, պաստառ, սահիկ
Մեթոդը՝ «Մտագրոհ», «Հարց ու պատասխան», խմբային աշխատանք, «Երեքնուկ», ճանաչողական և կիրառական առաջադրանքներ:
Դասի ընթացք
Կազմակերպական մաս / 2 րոպե/
Աշակերտների և ուսուցչի փոխադարձ ողջույն, բացակաների ամրագրում:
Դասի սկիզբ / 10 րոպե/
Ուսուցիչը գրատախտակին գրում է թվականներ՝ *տասը, հազար-հազար տասնհինգ, երկու, վեցական, մեկ երրորդ, հարյուր, քսանչորս, երեք վեցերորդ, ութ տասնհինգերորդ, հարյուր հինգ, երեքական*, այնուհետև առաջարկում է տրված բառերը եռաթև աղյուսակով ներկայացնել՝ ըստ իրենց ցույց տված նշանակության.
- առարկաների քանակն ամբողջ թվով
- առարկաների բաշխումը որոշակի թվային քանակով
- առարկաների մեկ կամ մի քանի մասերից կազմված լինելը

Սովորողները կատարում են առաջադրանքը նախ զույգով, հետո խմբով:

առարկաների քանակն ամբողջ թվով	առարկաների բաշխումը որոշակի թվային քանակով	արկաների մեկ կամ մի քանի մասերից կազմված լինելը

Աշխատանքը ավարտելուց հետո խմբերը ներկայացնում են իրենց գրածը: Կատարվում է քննարկում: Որպես ամփոփում՝ ուսուցիչը հարցնում է, թե կարող են արդյոք գուշակել դասի թեման: Աշակերտների պատասխանը լսելուց հետո գրատախտակին բացում է սահիկաշարը և ներկայացնում դասի թեման, նպատակը և վերջնարդյունքները, որից հետո փորձում են սահմանել թվական անունը:
Դասի ընթացքը (**25 րոպե)**
Ուսուցիչը դասարանը բաժանում է 4 խմբի: Յուրաքանչյուր խմբին հանձնարարվում է կարդալ դասագրքում ներկայացված՝ քանակական, դասական, բաշխական թվականներին և դրանց կազմությանը վերաբերող նյութերը.

1-ին խմբին - քանակական թվականներ
2-րդ խմբին - բաշխական թվականներ
3-րդ խմբին - դասական թվականներ
4-րդ խմբին - թվականի կազմությունը

Նյութը կարդալուց հետո խմբերին հանձնարարվում է իրենց հատվածը պատկերային ձևով հանձնել թղթապաստառին: Պաստառները փակցնում են գրատախտակին: Խմբերից յուրաքանչյուրը ներկայացնում է իր հատվածը: Արդյունքում աշակերտները յուրացնում են նոր գիտելիքը

ամբողջությամբ: Եթե հարցեր են ծագում, ապա տեղում պատասխանները տրվում են, կամ միջամտում է ուսուցիչը: Կատարվում է քննարկում: Վերջում նյութը ամբողջացնում է ուսուցիչը:

Համոզվելով, որ թեման յուրացրել են, ուսուցիչը կհանձնարարի հետևյալ առաջադրանքները.

Առաջին խումբ - Կատարել դասանյութին կից առաջադրանք 1-ը:

Երկրորդ խումբ - Առաջադրանք 1-ից ընտրել 5 թվական և կիրառել նախադասության մեջ՝ ենթարկելով ձևաբանական փոփոխության: Նշել՝ ինչ փոփոխություններ է կրում թվականը գոյականաբար գործածվելիս:/ Այս հարցը կա նաև դասանյութում:

Երրորդ խումբ - Թվական անվան հետ կապված լեզվաբանական հասկացություններ գտի՛ր մաթեմատիկայում և մեկնաբանի՛ր ընդհանրություններն ու տարբերությունները:

Ավարտելուց հետո խմբերը կներկայացնեն աշխատանքները, կկատարվի քննարկում: Ուսուցիչը կամփոփի դասանյութը:

Գնահատումը **(3 րոպե)** - Ձևավորող գնահատման որևէ տեսակ: Սովորողները կարող են կատարել ինքնագնահատում, որի սանդղակը տրված է դասանյութի վերջում:

Տնային աշխատանք **(3րոպե)** - Ուսուցիչը կարող է հանձնարարել դասանյութին կից առաջադրանքներից մեկը՝ սովորողների նախընտրությամբ.

- Հետազոտական աշխատանք. առաջադրանք 23:
- «Նպատակային խոսք» բաժնից առաջադրանքներ 21:

Անդրադարձ: **(3 րոպե)** Անդրադարձ կարող ենք կատարել «Երեքնուկ» մեթոդով:

Ամփոփման համար ուսուցիչը կիրառում է «Երեքնուկ» մեթոդը: Հանձնարարում է, որ յուրաքանչյուր աշակերտ Ա4 չափսի թղթի վրա նկարի 3 թերթանոց ծաղիկ, մեջտեղում գրի թվական անուն, իսկ յուրաքանչյուր թերթիկում լրացնի այս դասի ընթացքում սովորածը:

ԲԱՅ

«Բայ» թեմայի ուսուցումը

Դպրոցական դասընթացի բոլոր նյութերից առանձնանում է բայն իր քերականական հարուստ կարգերով ու խոնարհման ձևերով: Ուստի շատ մեծ է բայի դերը մտածողության, խոսքի ձևավորման ու հաղորդակցման գործում:

Խորհուրդ է տրվում բայի ուսուցումն սկսել այնպես, ինչպես նախորդ խոսքի մասերինը: Խթանման փուլում մտագրոհ մեթոդական հնարով պարզել, թե ինչ են հիշում սովորողները նախորդ դասարաններում սովորած նույն թեմայից:

Ծրագրին քաջածանոթ լինելով՝ ուսուցիչը գիտե, որ կրտսեր դպրոցում սովորողները սովորել են բայի խոսքիմասային իմաստը (առարկայի գործողություն կամ եղելություն), խոնարհումը երեք ժամանակներում (ներկա, անցյալ, ապառնի), ծանոթ են նաև դեմքի և թվի հասկացությանը: Այս հարցերի մասին սովորողների հիշողությունն ակտիվացնելուց հետո և այդ ամենը հիմք ընդունելով՝ ուսուցիչը խնդիր ունի. սովորողները պետք է բայի ձևաբանական բոլոր կարգերն ու խոնարհման առանձնահատկությունները ծրագրի սահմաններում սպառիչ կերպով սովորեն:

Ուսուցիչն առանձնացնում է այն, ինչ նորություն է այս դասարանում. դրանք բայի դրսևորման երկու ձևերն են՝ դերբայները (անդեմ ձևերը), խոնարհման ամբողջ համակարգն է՝ եղանակները՝ իրենց ժամանակաձևերով, ածանցավոր, անկանոն ու պակասավոր բայերի խոնարհման առանձնահատ-կություններով և այլն:

Դիմավոր և անդեմ ձևերի տարբերակումը սովորելուց հետո դերբայներն ուսումնասիրելիս անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել և առանձնացնել անորոշ դերբայը՝ որպես բայի

սկզբնաձև, որպես գործողության անվանում, որով էլ նա առանձնանում է մյուս դերբայներից և որպես անուն՝ գոյականի նման հոլովվում է անվանական հոլովմամբ՝«ու» հոլովիչով:

Անդեմ բայերի՝ դերբայների շարքից առանձնացվում են նաև այն դերբայները, որոնք մասնակցում են խոնարհմանը՝ եղանակային ձևերի կազմությանը և այդ պատճառով կոչվում են ***ձևաբայեր:***

Պետք է հոգ տանել, որ բայի ձևաբանական կարգերի և դրանց առանձնահատկությունների ուսուցման հետ առնչվող վարժություններն ու առաջադրանքները հանձնարարվեն գեղարվեստական խոսքի ընտիր նմուշներից՝ դրանք ծառայեցնելով սովորողների ընդհանուր գրագիտության և լեզվական կարողությունների զարգացմանը:

Դասի պլան (նմուշօրինակ)

Ուսուցչի անունը՝ _____

Ամիս–ամսաթիվ՝ _____

Առարկան՝ _____

Դասարանը՝ _____

Դասի տևողությունը՝ _____

Դասին տեսակը՝ _____

Դասի թեման՝ _____

Դասի նպատակը՝ _____

Դասի վերջնարդյունքը՝ _____

Միջառարկայական կապեր՝ _____

Խաչվող հասկացողություն՝ _____

Ուսուցման մեթոդներ՝ _____

Դասի սկիզբ՝ _____

Դասի ընթացքը՝ _____

Դասի ավարտ՝ _____

Տնային հանձնարարություն՝ _____

Գնահատում՝ _____

Գրականության ցանկ

1. Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., Հայոց լեզու: Ձևաբանություն: Եր.: Զանգակ-97, 2015: - 320 էջ:

2. Զաքարյան Հ., Հականիշների առձեռն բառարան: Եր.: «Զանգակ» հրատ., 2020.- 248 էջ:

3. Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., Հոմանիշների առձեռն բառարան: Եր.: «Զանգակ» հրատ., 2020.- 360 էջ:

4. Աղայան Էդ., Լեզվաբանության հիմունքներ: Դասագիրք բուհերի համար/ Երևան պետ. համալս. 4-րդ վերամշ.հրատ. - Եր.: Երևանի համալս. հրատ., 1987.- 736 էջ:

5. Աղայան Է, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Երևան, 1976:- 1642 էջ

6. Հանրակրթության պետական չափորոշիչ, 4 փետրվարի 2021 թվականի N 136-Ն:

7. Արդյունավետ հարմարեցումներ, Որակյալ կրթություն, Մեթոդական ուղեցույց, Ձեռնարկ, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան, 2022, 142 էջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան

Հայոց լեզվի ուսուցման և ուսումնառության նպատակները

Ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները

«Հայոց լեզու 7» դասագրքի հայեցակարգի հիմնական առանձնահատկությունները

Դասագրքի կառուցվածք

Թեմատիկ պլանավորման սկզբունքները

Թեմատիկ պլանավորում

Ինչպես պլանավորել դասը

Ձևաբանության ուսուցումը

Խոսքի մասեր. դասի պլանի նմուշօրինակ

«Գոյական անուն» թեմայի ուսուցումը. դասի պլանի նմուշօրինակ

Ածականի ուսուցման դասի նմուշօրինակ

«Թվական անուն» թեմայի ուսուցումը. դասի պլանի նմուշօրինակ

«Բայ» թեմայի ուսուցումը

Գրականության ցանկ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՔԱՐՅԱՆ, ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ, ԼԻԼԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

7–ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Մեթոդական ուղեցույց

Հրատարաչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Տեխնիկական խմբագիր՝ Նվարդ Փարսադանյան
Կազմի ձևավորումը՝ Մարիամ Կանայանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84/8
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 6 տպ. մամուլ

«Զանգակ» հրատարակչություն
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak